



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

308
VL 28

4310

300
1475-00

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

Копия из Государственного
МАСТЕРСКАЯ
Е. В. Топольская
Головинская ул. № 7

2010

308

Մ-28

պր-

300

ՄԱՆՏԵԳԱՅԵՐ

1475-ՍԱ

№: 8928

ԿԵՂԾԱԻՈՐ ԴԱՐ

1003
1912



Ք Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ց

Մ. Գ. Մ.

2001

ԱԳԼ-ՔԱՆԵԳՐԱԳՈՒ

ՏԳԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՅԻ

1901

6453

ՈՐՐԵՐԻ ԲԱՐԵՐԱՐ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆԻ

Дозволено Цензурою Тифлисъ 18 Ноября 1900 г.
Типографія К. С. Саноянца, въ Александрополѣ.

ՅԻՇԱՏԱԿԻՆ



Յարգուծօր Առիթուն՝ Է

Թ. Ա. Գ. Մ. Ա. Ն. Ի. Զ. Ը.

ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ

Իտալացի յայտնի գիտնական և պուրլիցիստ Մանտեզացցայի այս փոքրիկ աշխատութիւնը, որ հասարակական բարքերի անողոք մերկացումն է, նպատակալարմար դատեցի թարգմանաբար տալ հայ ընթերցողներին: Քանի որ հայերս էլ քաղաքակրթութեան աստիճաններով բարձրանալիս նոյն պակասութիւններն ենք իւրացնում, ինչ որ միւս քաղաքակիրթ ազգերի սեպհականութիւնն է կազմում, քանի որ մեր դպրոցներում, ընտանիքներում և հասարակական շրջաններումն էլ տիրում է նոյն կեղծիքը, քանի որ մենք էլ մեր աւօրեայ կեանքի մէջ նոյն դիմակն ենք գործածում, այս զբքի ընթերցանութիւնը օգտակար կարող է լինել:

Մ. Վ.

ԿԵՂԾԱՆՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԳԱՆԱԿԱՆ ԱՅՈՒՆՆԵՐԻՄ

Ձէ, մարդը չի կարող պարծենալ, որ ինքն է ստեղծել կեղծաւորութիւնը: Ուրիշները հետ ապրելու այդ արուեստը, այդ փոքրիկ քաղաքականութիւնը մարդիկ սովորել են ուրիշ կենդանիներից:

Որպէսզի ծանօթանանք Մօլիէրի*) Տարտիֆի հետ, մենք պիտի փոխադրվենք տասնհեօթերորդ դարը. բայց կենդանիները, որ գրքեր չեն կարդում ու գրում, բայց շատ բան մեղանից լաւ են կարգաւորում, ունէին իրանց Տարթիւֆները հէնց երկրագնտի սկսված օրից. իսկ մենք, երկտանի կենդանիներս միայն համեստութեամբ, երբեմն էլ շատ անշնորհք կերպով, նմանվել ենք նրանց:

Ծանօթ. Աստղանիշ (*) բառերի բացատրութիւնը տես գրքի վերջում:

Այնպիսի բաներ, որ յատկապէս և միայն մարդուն յատուկ լինէին, շատ քիչ կան. օրինակ.

Մենք պարծենում ենք, որ ման ենք գալիս երկու ոտի վրա, բայց թուզունների հազարաւոր տեսակները մեզ պէս երկոտանի են:

Մենք հպարտանում ենք, որ կարողանում ենք խօսել, բայց ագռաւները, կաշաղակները, թուխտակները նոյնպէս պարզ արտասանում են բառերը:

Մենք, յաճախ, առանձին սնապարծութեամբ ենք նայում մեր հազուստներին, բայց մոռանում ենք, որ միջատների ամբողջ խմբեր կարողանում են հիւսել մետաքսից, բրդից և քնրոյշ փետուրներից — և որ ամենից լաւն է — կարողանում են իրանց հագուստը մեծացնել համապատասխան մարմնի մեծութեան:

Անկասկած, մեր երկրագնտի բոլոր կենդանիների մէջ միայն մենք կարող ենք գրել և կարգաւ. բայց տարաբաղաբար շատերի հեղինակութիւնները չեն կարգացում, շատերի գրվածքները իբրև մութ, սեպաձև արձանագրութիւններ անկարելի է հասկանալ, իսկ ոմանց գրվածքներն էլ, իբրև վնասակար, լաւ կլինէր, եթէ բոլորովին չկարգացվէին:

Իսկ մնացած բաներում մարդը անասուն-

ներից ամենեկին չի տարբերվում. — Սպանում և ոչնչացնում է իր մերձաւորին՝ ինչպէս վազրը, գողանում է՝ ինչպէս կատուն, կծում է՝ ինչպէս շունը, կեղտոտում է իրան խոզի պէս, բայց որովհետև մարդն ընդունակութիւններով աւելի բարձր է կանգնած խոզից, այդ պատճառով էլ կարողանում է մի անգամից ապականել մարմինն էլ, հոգին էլ:

Կարո՞ղ է մարդը գտնէ իր մասին ասել, թէ ինքը միակ կենդանին է, որ կարողանում է ձեւանալ, կարողանում է ծածկել իր խայտառակ գործունէութիւնը և հրապարակ հանել զեզեցիկ ստութեան փայլուն դիմակը:

Ոչ. Տարտիւֆն էլ չի ծնուել մարդկային ընտանիքի մէջ, այլ դրանից առաջ կար: Նրա նախազարգացման ժամանակները, այլ էլ աւելի հեռու — եղել է կենդանական շրջաններում:

Այո, Տարտիւֆն ունեցել է իր նախորդները այնպիսի կենդանիների մէջ, որոնք երկրագնտի երեսին առաջ են երևացել քան ոյնաւոր կենդանիները: Այո, նոյն իսկ խիտունները կեղծաւոր էին:

Առաջներին ճշմարտութեան մէջ համոզվելու համար հարկաւոր չէ կենդանաբանութիւնն ու-

սուժնասիրել, հարկաւոր չէ հաստահատոր գրքեր կարդալ, ուր գրված են կենդանիների վարք ու բարքի պատմութիւնները: Առանց տանից գուրս գալու ուսումնասիրեցէք շունը, կատուն, կամ վանդակի մէջ փակւած թռչնիկը և գուր կհամոզվէք ու կը տեսնէք յաջող ճեւսնալու եւ նմանակալու ամենալաւ դէպքերը:

Բազմաթիւ օրինակներից բերենք մի երկուսը, որ նկարագրել է մեծ արուեստագէտ բժիշկի-բանաստեղծ Բայբէրտի: Լսեցէք նա ինչ է ասում. «Կատուից լաւ Մաքիալեկլի* չկայ, որը Ֆլօրենտացի քարտուղարի համոզմունքները գործադրում է կեանքի մէջ նրանից շատ դարեր առաջ: Հազարաւոր օրինակներից մինը վերցնենք: Մաքիալեկլին ասում է. «Թշնամիներին պիտի շողոքորթել, կամ նրանց պիտի ոչնչացնել»: Չատ գեղեցիկ:

«Կատուն սաստիկ թշնամի է մկան և շան հետ. առաջինն նա անխիղճ կերպով ոչնչացնում է, որովհետեւ իրանից թոյլ է. իսկ երբ հարկաւոր է լինում երկրորդ թշնամու հետ ապրել, նա խելացի է համարում նրա հետ հաշտ ապրելը և վերջի վերջոյ սկսում է նրա հետ ուտել միևնոյն ամանից և քնել նրա միջքի վրայ:

«Այս տաղանդի մէջ ակներկ առաջադիմութիւն է նկատվում, որ տկամայից առաքինի է դարձնում

մէկին, բայց կատարեալ առաքինի, որ էլ տեղ չի թողնում ծածուկ թշնամութեան համար և բնական թշնամիներին դարձնում է արուեստական բարեկամներ և այն ոչ մեզ, մարդկանցս պէս: Երբ մեզ հարկաւոր է շողոքորթել մի անյարմար թշնամու, մենք այդ անում ենք այնքան անշնորհք և այնքան ոյժ գործ դնելով մեզ վրա, որ ատելութիւնը չփոքրացնելով, արտայայտում ենք և արհամարհանք: Մինչդեռ երբ շունը յարձակում է կատուի վրա, վերջինս այնպիսի տակտիկա է բանեցնում, որ բոլորովին նսեմացնում է Մաքիալեկլիի կուռելու եղանակը, մանաւանդ, որ վերջնիս օրէնքը արդէն հնացել և անպէտքացել է շնորհիւ կուռելու պայմանների փոփոխութեան, մինչդեռ կատուն միշտ կուռել է այնպիսի կատարելագործված միջոցներով, որ բարեփոխութեան կարօտ չեն: Եթէ չի կարող փախչել, նա աշխատում է պատի տակին յարմար դիրք ընդունել և դառնալով դէպի թշնամին ընթացք է տալիս իր իսկական և կեղծ ոյժի բոլոր տարրերին — մէջքը ուռցնում է, ստառնում է ճանկերով, ատամներն է ցոյց տալիս, աշխատում է մեծ երևալ և իսկականից աւելի ահուելի, իսկ դրա համար նոյն իսկ պոչի ծաւալն է մեծացնում՝ ցցելով մտերբը. դրա հետ միասին թաթերն է շարժում, ճղում

է, ֆոսսացնում, ուղղակի դարմանալի է: Ջունը, որ մի ոստիւնով ու հարվածով կարող էր նրան պատառտեւ, այդպիսի պաշտպանիկելու եղանակից ապշած՝ կանգնում է և կարծես կախարդված կատուի այգուլիսի ճիւղերից, որ իր շունեցած ուժերըն աշխատում է հաւտրել, փոխանակ յարձակվելու, բոլոր բարեխիղճ արարածների պէս, բաւականանում է հաջելով, մինչև որ կատուն յարմար ըստէ գտնելով փախչում է կամ լուսամուտից մտնում կամ նկուղի անցքն է խրվում և այսպիսով իր հակառակորդին փոշման թողնում»:

Բայց ահա՛ նոյն մարդու մի ուրիշ նկարագիր, որ դարձեալ կատուի մասին է. «... Երեակայեցէք խոհանոց, ուր կենդանութիւն է տիրում, որովհետեւ ճաշ է պատրաստուում: Այստեղ է խոհարարը, իր օգնականը, ազախինն ու ուրիշները, որոնք անընդհատ անց ու դարձ են անում: Սեղանի վրա դրած է ձուկը, կատուի սիրած պատառը: Կատուն էլ այնտեղ է. նա արդէն նախադիժ է քաշել և որոշել է իր բոբրոբված ախորժակին բաւականութիւն տալ. բայց ի՞նչպէս անել այս ամեն կողմից սուր դիտող աչքերի առաջ. — սպասել և անտարբեր ձև անալ: Իսկ համբերողութեան և ձևանալու մէջ կատուն նմանը շունի ոչ մարդկանց և ոչ կենդանիների մէջ, նա իրան տալիս

է արհամարտ և անտարբեր կերպարանք, կարծես աշխարհիս վրա նրան ոչ մի ցանկութիւն չի գրըզուում. նա մօտենում է կրակին, պառկում է, մեղմիկ մուռացնում և իբր թէ նիրհում է, բայց աչքի պոչով հսկում է իր որսին: Եթէ նրան մօտենար, նա ձեզ կթւայ համեստ, բարի, դուրեկան: Ո՞վ է նայում սեղանին. նա, չէ, նա ոչինչ չգիտէ, նա ընդունակ չէ այդպիսի գոգութեան. նա գտնվում է այստեղ նրա համար, որ ձեր հասարակութիւնն է սիրում: Վերջապէս հասնում է ցանկալի ըստէն, երբ օգտուելով արգոսների*) բացակայութիւնից, կամ շփոթված դրութիւնից, կարող է իր նախագիծն իրագործել: Կայծակի արագութեամբ ընկնում է սեղանի վրա և ձուկը բերանին արագ փախչում է կամ մառանը, կամ ցանկապատի յետը, կամ քարերի տակ, ուր ըսկըսում է հանգիստ խժուել իր որսը: Եթէ դուք այդ ըստէին տեսնէք, այդ նրան չի վրդովիլ. նա իրան ապահով է գգում և չի էլ թապչում: Գոռացէք, սպառնացէք, քարեր գցեցէք, նա շարունակում է ուտել և չի էլ շարժվում: Իսկ յետոյ, երբ ընտանիքը բոլորած սեղանի շուրջը տաք տաք կսկսի խօսել կատուի արշաւանքի մասին, նա փառաւոր ճաշից յետոյ հանգիստ քուն քաշելիս կլինի: Միթէ այդպէս գեղեցիկ կերպով կա-

տարած արշաւանքը արժանի չէ զարմանքի և ներման:

«Օ՛, Էպիկուրեաններից*) ամենարագաւորը, դու կարող ես բաւականութիւն տալ քո ազահութեան բոլոր քմահաճոյքներին անպատիժ կերպով և ապահով լինել, որ չես վտանգի քո առողջութիւնը և տխուր չես լինիլ:»

Միջատների նմանվելու զէւրբերն էլ շափազանց բազմազան են. նրանք կեղծաւորութիւնը հասցնում են մինչև այն տեղը, որ իրանց մարմնի հետ միացնելով նրա անբաժան մասն է կազմում: Նրանք ընդունում են աւաղի, հողի, տերեւի գոյն, կամ մէկ մէկու նմանվելով թշնամիներին սըխալացնում և այդպիսով փրկվում են: Այս իր տեսակի նմանողութիւնը, որ ընդհանուր անունով կոչվում է միմիզմ, վերջին ժամանակները շատ յայտնի բնագէտների ուշադրութիւնն է գրաւել:

Հարաւային Աֆրիկայում մի քանի թիթեռնիկներ, որոնք իրարից բոլորովին տարբեր տեսակների են պատկանում, կատարելութեան հասած ճշգրութեամբ թէ գոյնով և թէ ձևով նմանվում են էլիկօնիգի կոչված միջատներին, որոնք վարչելի հոտ են արտադրում: Թռչունները այդ միջատներին ընդունելով էլիկօնիգի միջատների տեղ չեն մօտենում նրանց:

Փասմիզ կոչված միջատների էգերը յաճախ իրանց գոյնը նմանեցնում են տերեւի գոյնին, մինչդեռ արուի նմանողութիւնը շատ կոպիտ է լինում:

Հարաւային Աֆրիկայի թրթուրը իր բունը շինում է ծառերի վրա բոլորովին նման ծառի վրչերին:

Պատերի արանքներում և փողոցներում ապրող մողէսները յաճախ մոխրագոյն են լինում, քան կանաչ, մինչդեռ գաշտերում ապրողները՝ աւելի կանաչ են լինում քան մոխրագոյն: Միևնոյն կենդանին ընդունում է զանազան գոյն, որ թըշնամուց հեշտութեամբ խուսափի:

Կենդանական թագաւորութեան բոլոր Տարտիֆներից, որոնք կարող են մարդկանց կեղծաւորութեան զարմանալի գասեր տալ, երբէք չեմ մոռանալ երկու միջատներ, որոնց ես ուսումնասիրում էի. մէկը Փլորենցիայի իմ այգու մէջ եղած թրթուրն էր, իսկ միւսը Չինաստանի սահմաններում-Սիկիմում գտնված թիթեռնիկը:

Քանի որ բազմ չէի ունեցել սեպհական բընակարան ունենալու, ես, շատերի պէս, մէկ բընակարանից միւսն էի տեղափոխվում, աշխատելով հեռու մնալ այն վտանգաւոր կիրճից, որ հարիւր անգամ վատ է Սցիլլայի և Խարիբդայի*)

կիրճից, որի մէկ ավր ժայռ է—տանտէրը, իսկ միւս կողմը ծովի պտոյտներն են—բարի հարեւանները:

Մի անգամ ես բնակարան վարձեցի մի տան առաջին յարկում, որ զիմացը մի այգի ունէր, ուր զբօսնում էի երբեմն: Ինչպիսի ոգորմելի այգի էր, շրջապատված շատ հին բնակարանով և մօայլ պատերով, նա երբէք արևի երես չէր տեսել: Յունվարից մինչև դեկտեմբեր շարունակվող խոնաւ ցուրտը աւելի սուսկերին էր կեանք տուել քան ծաղիկներին, աւելի պատատուկներին՝ քան պտուղներին: Խոտը այնտեղ աճել էր երկար—երկար, բայց հիւանդոտ և դժգոյն, իսկ իմ տնկած ծառերը նման էին աղքատ ընտանիքների հիւանդոտ երեխաներին: Մշտական խոնաւ կանաչների միջով երկար գիշերները սողում էին ցամաքային խոտերը յետևից փայլուն ծոր թողներով: Կատուններն իրանց գիշերային արշաւանքների ժամանակ այնտեղ էին տանում խոհանոցի մնացորդները, իմ բարի հարեւաններն էլ լուսամուտից այնտեղ էին շղթուում աղբը, որ ես նրանց ամենևին չէի խնդրել: Այս այգում տնկեցի երկու սօսի ծառ, որոնք մտածելով իրանց աղատ լեռների, իրանց Ալպեան արեգակի ոսկեգոյն ճառագայթների մասին, տանջվում էին հայրենիքի

1005
12129



կարօտով: Երկու ակաջիամիտ ծածկիկ էին տանուկ ռախիտ կանաչով, բայց այն մտնում էր վառարան, որ բարձրաձայն բժշկութիւն է պահանջում: Ոգորմելի նարնջի ծառերը տանջվում էին նեարգային հիւանդութիւնով, և օր օրի վրա աւելի ու աւելի փոքրանում և նուազում էին: Մի սալորի և խնձորի ծառ մի տարի ծաղկում էին, միւս տարին՝ ոչ. տալիս էին քացախի պէս թթու և տտիպ պտուղներ, իսկ մի քանի կենդանութիւնից զուրկ վարդի թբփեր, վատոյժ և անգամալոյժ, ներկայացնում էին մանր պարազիտների*) մի ամբողջ մուղէյ: Ո՛չ, սա այգի չէր, այլ հիւանդ բոյսերի հիւանդանոց: Եւ հէնց հիւանդներ էլ ապրում էին, իսկ ես կէս բժիշկ, կէս այգեպան սիրում էի այդ խեղճ հիւանդներին, որոնք կէս տարի իմս էին համարվում, երբ վճարում էի տանտիրոջը բնակարանիս վարձը: Նոյն իսկ վարձու վերցրած կտոր հողն էլ միշտ մեր բարեկամն է մնում, որովհետև հողից ենք առաջացել, հող էլ պիտի դառնանք:

Մի անգամ ես անշարժ կանգնած էի կանաչով ծածկված սալորենու առաջ և հարցնում էի նրան թէ այս տարի պիտի ծաղկի: Այդ ժամանակ ինձ թւաց, որ մի տեղ, բնի վրա, որտեղից բաժանվում էր փոքր ճիւղը—հաստացել էր: «Մա երևի ծառի ուռույցը է» մտածեցի ես. մէկը այն

հաղարաւոր հիւանդութիւններէց, որոնցով տան-
ջվում էին մարտը օգից ու արեւից գուրկ խեղճ
ծառերը: Այս ուռոյցքը գլանի ձև ունէր, ծառի
ճիւղի նման և մի ծայրին նոյն խոկ փոքրիկ փուշ,
ինչպիսիները գտնվում էին ծառի դանազան տե-
ղերում:

Ես գիտեցի այդ տեղը ամեն կողմից և բժշկի
ու բնագէտի հայեացք զցեցի ամբողջ ծառի վրա
և էլի գտայ այդպիսի ուռոյցքներ հինգ հատ, փոք-
րերը տեղաւորված էին մանր ստերի վրա, մե-
ծերը աւելի հաստ ճիւղերի վրա: Ես նրանցից
մէկին ուղեցայ շօշափել իմանալու նրա էութիւ-
նը: Իբրև պատօրագիայի*) նախկին ուսուցչապետ,
ինձ հետաքրքիր էր իմանալ նրանց էութիւնը, որ-
պէսզի գիտենայի թէ այս նորեղուկը, սր տեսա-
կին է պատկանում, պէտք է համարել նրան վը-
նաստկար թէ օգտակար, համարել ծառին համա-
սեռ թէ այլասեռ:

Բայց ինչ սարսափ. իմ հետախուզող մատը
գիպաւ ոչ թէ կոշտ ծառի, այլ փափուկ, ճկուն
նիւթի, որը տեղի տուեց ճնշման և բաւական
կուշ եկաւ: Սա ուռոյցք չէր, այլ թրթուր, որ
այնքան կատարելութեամբ նմանվել էր ծառի կե-
ղին, ճիւղի ձևին և բոլորովին միացել էր նրա
հետ:

Ես ձայն տուի իմ երեխաներին ու բարեկամ-
ներին ընծայ խոստանալով նրան, ով կկարողա-
նայ մի որեէ առանձին բան նկատել ծառի վրա.
բայց ոչ որ բացի տերևներից, ստերից ու ճիւ-
ղերից ոչինչ չնկատեց: Այս թրթուրը զարմանա-
լի ճարտիւֆ էր և կարող էր դառնալ այն մարդ-
կանց, որոնք ցածահոգի լինելով, հագնում են
աղնիւ մարդկանց գիմակը. որոնք սնափաւ, հը-
պարտ, լինելով, ընդունում են համեստի կերպա-
րանք. որոնք ազբատ լինելով, ձգտում են հա-
րուստ երևալ. որոնք տգէտ լինելով, կաշուէց
գուրս են դալիս իմաստուն երևալու համար:

Կենդանական թագաւորութեան երկրորդ Տար-
տիւֆին ես պատահեցի ուրիշ այգում, որ իմնից
մեծ էր և բոլորովին այլ սլայմանների մէջ:

Մի գեղեցիկ գարնանային առաւօտ աշխոյժ,
առողջ տիրէթի ձիով իջայ այն հովիտը, ուր կար-
կաշող ախանակիտ փտակը բաժանում է անգլի-
ական Սիկկիմը ազատ հողից: Ես կարող էի ինձ
համարել Չինաստանում, որովհետեւ Սիկկիմը գըտ-
նվում է Երկնային թագաւորութեան լայն և ան-
ուղղակի գերիշխանութեան տակ. ես գտնվում
էի Չինաստանում, որովհետեւ իմ ուղեկիցները
չինացիներ էին:

Վար իջայ համեստ ձիուցս նախաճաշելու,

բայց մոռանալով իմ յոգնածութիւնը, վաղեցի դէպի անտառ, դաշտ, որ կենդանութեամբ լըց-ված էին: Ախտուամ երկար ժամանակ կապած ձիու պէս, որն ազատվելով վագում է դաշտ և ողջունում մայր բնութեանը իւր երկար և լիասիրտ խրխնջոցով, ես էլ վազվզում էի անընդհատ մէկ անկիւնից — միւսը: Որքան անուշահոտութիւն ներս ընդունեցի իմ լայնացած թորքերիս մէջ. նոր եկած անձրևից թարմացած բերրի հողի հոտը, ծառերի, ծաղիկների, պտուղների անուշահոտ բուր-մունքը ազահաբար ներս էի շնչում, մինչև անգամ կարող եմ ասել ես շնչում էի թաւշային հոտ, որ դուրս էր գալիս ամեն թփից, ամեն մի ծաղկի բաժակից, ամեն մի բզէզի բնից, տաք և մատաղ հոտ, որ առատօրէն բաշխվում է ամեն մի կենդանի արարածի սիրոյ համբոյրի պէս և կարծես ասում է. ապրիր, սիրիր:

Փառահեղ կանաչի և թփերի մէջ երգում էին թութակները, ճշում էին կապիկները, շշում և զգգում էին միջատները, կեանքը ամենքին լի ու լի ուրախացրել էր և նրանք անհամբեր կերպով սպասում էին թէ երբ պիտի այս կեանքը դեռ չծնված արարածներին-իրանց ձագերին պարգեւեն: Այս դրախտի մէջ հիւանդներ չկային. բոյսե-րը, կենդանիները, մարդիկ բոլորն էլ առողջ

և զուարթ էին: Ես ինքս դադարեցի մարդկային լեզուով խօսելը. ես էլ փնջացնում և խրխնջում էի, որպէս զի այդ բնութեանը աւելի մօտիկ կանգ-նած լինեմ, կարծես հարբել էի առատ կեանքից: Մենք աւելի շատ, քան թէ թուում է, կենդանա-կան մեծ ընտանիքի մէջ արարածների եղբայր-ներն ենք, աւելի շատ՝ քան մարդկային փոքր ըն-տանիքի մէջ: Իսկ ինչ ինձ է վերաբերում, այն բացառիկ օրերը, երբ կորցնում եմ դէպի մարդ-կութիւնը տաժած յարգանքը, ես գոհ եմ լինում, որ եղբայր կարող եմ համարվել հոտաւէտ ծաղ-կին, երգող սոխակին, խրխնջող ձիուն, թռչող ծիծեռնակին: Այդ օրը, այդ ժամին Սիկկիմի կու-սական անտառներում ես ցանկանում էի ունենալ աստուածային ամեն բան ընդգրկող ձեռքը, որ մի անգամից սեղմէի կրծքիս բոլոր կանաչ, բազ-մերանգ, թռթռուն, և զեղուն արարածներին. որովհետև նրանցից իւրաքանչիւրի մէջ ես զգում էի իմ մասերից մէկը:

Ես ոչ միայն չէի խօսում, այլ և թոյլ չէի տալիս ինձ պոկել մի ծաղիկ, մի տերև: Եւ ո՞վ կմտածէր մի ուուրլի դնել իր գրպանը, եթէ յան-կարժ գտնէր այն միլիարդները, որ Լօնդօնի բան-կի գետնայարկումն են պահվում: Այդպէս էլ ես. ինչո՞ւ համար պոկէի ծաղիկը կամ տերևը, երբ

լողում, հրճվում, կորած էի կանաչի ալիքների մէջ, որոնք արտացոլում էին երկնքի սսկեճաճանց կապուտակուծիւնը:

Ես մօտեցայ վտակի ափին. ջուրն այնքան մաքուր էր, որ կարծես լեռնային բլուրեղ լինէր: Արծաթափայլ յատակում կայտառ կարմրախայտները վխտում էին կռիւ մղելով հոտանքի գէժ: Ես անկարող էի զգում ինձ բնութեան այս փարթամութիւնը միանգամից ընդգրկելու: Ես աչքերս փակեցի մի առժամանակ և երբ նորից բացարի, աջ թևիս կողմը տեսայ մի փոքրիկ ծառ անորոշ տեսքի: Նա անշուշտ պատկանում էր թագաւորութեան հասարակ գառակարգին և փառաւոր ծառերի մէջ ոչ որ չէր նկատել այդ հասարակ բոյսը:


Ճիւղերից մէկի վրա կար մի դեղնած տերև, դանդաղ քայքայումից համարեա թէ չորացել էր և այս տերևը իմ ուշադրութիւնը գրաւեց. Ի՞նչպէս այս մատաղ կանաչի, այս յոփացած կեանքի մէջ կարող էր տերևը հիւանդանալ և մեռնել ճիւղի վրա դանդաղ բարակացաւից: Պէտք է թաղել մեռածին կամ գոնէ հեռացնել զուարճացողների շրջանից: Այո, նա մեռած է. բայց որքան գեղեցիկ է իր մահուան բոպէին, մարմնակազմն ամբողջովին ոչնչացել է. մնացել են ջիղերն ու հլուսվածքի թելերը. տեղ տեղ կարծես այրվել է.

երևի մի պարազիտ ոչնչացրել է այս տերևը:

Օ՛, այս տերևը պիտի գլտկեմ և պահեմ իմ ֆլօրենտացի բարեկամներիս համար: Ո՛րքան նուրբ է, ամրակազմի ցանցը. ի՞նչպէս փառահեղ է նեարդների ճիւղաւորութիւնը. ինչպէս կարող էր դանդաղ քայքայումը պահել այն կազմութիւնը, որի միջով մի ժամանակ կեանքն էր շրջան առնում:

Ես երկու մատս մօտեցրի, որ պոկեմ տերևը և ինձ սեպհականեմ, բայց յանկարծ տերևը շարժվեց ու թռաւ թողնելով իմ ձեռքի մէջ փոքր ինչ փայլուն փոշի: Բանից երևաց, որ սա թիթեռնիկ էր, և սա խաբում է և՛ թռչուններին, և՛ մարդկանց որոնք կարող էին բռնել իրան:

Եւ այս թիթեռնիկը Տարաիւֆ էր, կեցծաւորութեան վարպետ, նման վերոյիշեալ թրթուրին:



Ք Լ Ո Ւ Խ Թ Բ.

ՄԱՐԳԱՍԵՆ ԿԵՂԺԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿՁԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մարգկանց մէջ երբ ծնեց առաջին Տարտիւ-
ֆը: Նա ծնեց առաջին մարդու և կնոջ հետ: Որ-
պէս զի կարելի լինի ձևանալ, անհրաժեշտ է գոնէ
երկու անձնաւորութեան ներկայութիւնը. պիտի
լինի խարոզ և խարվող: Սակայն այժմ, յայսքան
գարերի ընթացքում ձևանալու արուեստն այն-
քան զարգացել է, որ մարդ ինքն իրան էլ է
խարում:

Ո՞րտեղ է կատարվել կեղծաւութեան առաջին
յանցանքը:

Եղեմական դրախտում, որ Աստուած տուեց
մարդուն մշակելու և պահելու համար:

Այն ժամանակ կատարվեց այդ առաջին յան-
ցանքը, երբ Ադամ ու Եւան ամաչեցին իրանց
մերկութիւնից և թզենու տերևներից իրանց հա-
մար սփածանելի կարեցին: Եւ Սուրբ Գիրքը յայտ-
նում է մեզ այդ մասին Ծննդոց գրքի երկրորդ
պլսի վերջին տան և երրորդի պլսի մէջ:

.

Գլուխ II. 25. Ադամն և իւր կինը մերկ էին
և չէին ամաչում:

Գլուխ III. 1. Օձը, բոլոր գաշտային գազան-
ներից, որոնց Աստուած ստեղծել էր, ամենախո-
րամանկն էր: Օձն ասաց կնոջը. ճշմարիտ է, որ
Աստուած ասել է այգու ծառերի պտղից մի կե-
րէք:

2. Գինն ասաց օձին. մենք այգու բոլոր ծա-
ռերի պտուղներից ուտում ենք:

3. Միայն այն ծառի պտուղներից, որ այգու
մէջտեղումն է գտնվում, ասաց Աստուած չու-
տէք, և մի մօտենար նրանց, որ չմեռնէք:

4. Եւ ասաց օձը կնոջը. Ոչ, չէք մեռնիլ:

5. Բայց զիտէ Աստուած, որ երբ ուտէք այն
ծառի պտղից, ձեր աչքերը կ'բացվեն և դուք կը
լինէք իբրև աստուածներ-բարի և չար իմացող-
ներ:

6. Գինը տեսաւ, որ ծառը լաւ է ուտելու
համար և գեղեցիկ ու զուրեկան է աչքի համար
և առաւ նրա պտղից կերաւ, տուեց իր մարդուն
և նա կերաւ:

7. Այն ժամանակ նրանց երկուսի աչքերն էլ
բացվեցան. և նորա տեսան որ մերկ են և կարե-
ցին թզի տերևներից իրանց համար սփածանելի:

.

Անա առաջին կեղծաւորութեան յանցանքը, բայց դրան յաջորդեց և երկրորդը:

8. Եւ լսեցին Տիրոջ ձայնը, որ ման էր դալիս օրուայ զով ժամանակ այգու մէջ և թագնը վեց Ագամը և իւր կինը Տիրոջ երեսօց ծառերի մէջ:

Այս երկրորդ յանցանքն էր, սրան յաջորդեց երրորդ, չորրորդ, հինգերորդ, մինչև այն միլիօնաւոր և միլիարդաւոր խարեբայութիւնները, որոնք կազմում են մարդկային ընտանիքի պատմութեան կիսից աւելին:

Ագամն արդարանում է Աստծու առաջ մեղադրելով Եւային, Եւան յանդիմանութիւն ստանալով Աստծուց, ամբողջ մեզքը պցում է օձի վրա. վերջինս էլ երևի մեզքը կգնէր չորրորդ յանցաւորի վրին, եթէ նրանք միայն երեքը չըլինէին այնտեղ:

Ուրեմն, կեղծաւորութիւնը ծնվել է թղենու առաջին տերևի հետ, որ պոկեցին Եգեմական դրախտից: Թէև Սուրբ Գիրքն ամօթի զգացմունքից դրդված մեզ հաւատացնում է, որ այգւլիսի տերևներ շատ կային և նրանք կարված էին ծածկելու համար, բայց յաջորդականութիւնն ու առողջ գատողութիւնն ասում են մեզ, որ այնտեղ

կար եղած չեղած մի տերև և այն՝ փոքրիկ տերև: Յետոյ սկսեցին փնտուել աւելի մեծ տերևներ, որովհետև աճող կեղծաւորութեան հետ աճեց և մեծ ծածկոցի պահանջը, մինչև որ փոխարկվեցին ամբողջ հագուստի, որ ծածկում է մարդուն ստից ցգլուխ:

Ներկայումս, այսքան դարեր անցնելուց յետոյ թղենու տերևը հագոյնում են և կենդանիներին և մարմարէ արձաններին. բայց վերջինները Ագամի և Եւայի նման բաւականանում են մի տերևով: Մեր բարի նախահայրերը օգտվեցին թղենու տերևներով, որպէսզի իրանց համար սփածանելի չինեն, որովհետև ամաշեցին իրանց մերկութիւնից. իսկ մենք, կեղծաւորութեան մէջ մեծ յառաջագիմութիւն գործելով, գործ ենք անում թղենու տերևը, որ ծածկում է, կամ տրամադրում է մրտածել թէ ծածկում է աւելի, քան թւում է մերկութիւնն. ճշմարտութիւնն այնպէս ենք ծածկում, որ նա դառնում է կեղծիք, մենք նոյն իսկ տերևը փոխել ենք կեղծիքի, որովհետև նախ՝ նա տերև չէ, երկրորդ՝ թղենու չէ: Արձանների համար մենք չինում ենք մետաղից, իսկ կենդանի մարդկանց համար՝ մետաքսից և հազար ուրիշ գործվածքներից:

Այսպէս, հէնց առաջին անգամ, երբ մարդն

ամաչեց իր մերկութիւնից, նա եղաւ կեղծաւոր տալով այդ յատկութիւնը ժառանգաբար իր սերնդին:

Եւայի համար իր մերկութիւնից ամաչելը եղաւ կեղծիքի սկիզբը, իսկ իսկական յանցանքը, որի համար յանգիմանում էր իրան այն էր, որ նա կերաւ Աստծուց արգելված պտուղը:

Ձեանալու ամբողջ հոգեբանութիւնը կենդրոնացած է այստեղ, այս պատմական վայրկեանում: Եւան կամենում էր արգելված պտուղի համը տեսնել և միևնոյն ժամանակ հնազանդ մնալ Աստծուն. բայց միաժամանակ չկարողացաւ անել և՛ մէկը և՛ միւսը, և նա գտաւ բոլոր խաբեբայութիւնների առաջին անկիւնադիծը—անել այն, ինչ կամենում է, բայց ծածկել այն, ինչ որ արված է: Բաւականութիւն տալ իր ցանկութեան, բայց յանցանքը ծածկել թղեհու տերևով. իսկ յետոյ, ճ, կանացի նրբութիւն, գտնել յանցագործութեան ընկեր, որ յանցանքի կէսը վերցնի իւր վրա և նա թղեհու տերևը կէս է անում գործելով երկրորդ յանցանքը, որով ծածկւում է առաջինը:

Այդ պատմական ըուպէից արգելված պտուղները դարձան Եւայի աղջիկների համար ամենազբաւիչները և որովհետև Եղեմը բաժանվեց հա-

զարաւոր մարդկային մանր այգիների, ուստի սկսվեցին ցանկապատների և պատերի վրայից անընդհատ մագլցումներ և մարդկային ցեղի մի մասը միշտ զբաղված է միւս մասին խաբելով: Սկսվեց մեծ ու փոքր ստերի փոխանակութիւն, խաբեբայութիւնների դուրեկան հիւսվածք, որ մտել է հասարակական կեանքի ամեն մի երակի մէջ, օրէնքների, պետութիւնների, ընտանիքների ամեն մի անկիւնը և զուարճացնում է մեզ բազմազան ընծաներով, պատմվածքներով, հանելուկներով:

Ո՛րքան հեռու ենք մեր նախածնող Եւայի առաջին և հասարակ թգէկու տերևից: Այնքան հեռու ենք, որքան հեռու է ամերիկացոց նորագիւտ թնդանօթ Վեդուվը չորրորդ դարաշրջանի մեր նախնիքների պատմական քարէ կացնից: Ներկայումս այդ տերևը գործվում է հարիւրաւոր գանազան թելերից, որոնք մտացածին կերպով հիւսվում են իրար հետ, որոնք միշտ ուրիշ յատկութիւն ունին քան թւում են, որոնք կազմված են բրդից, բայց մետաքս են երևում, որոնք ունին մի գոյն, բայց երևում են ուրիշ գոյնի, որոնք խաբեբայութիւնների գարմանալի ներդաշնակութեամբ նկարում են մի խոշոր կեղծիք. որ հարիւր հազարաւոր մանր խաբեբայութիւնների գուամարն է:

Ուր է այն քիմիկոսը, որ կարողանայ իսկականը կեղծիքից զանազանել, ուր է այն ճարտար մանրագէտը, որ կարողանայ բնականը արուեստականից ջոկել: Ներկայումս կեղծաւորութիւնը դարձել է մթնոլորտ, ուր մենք բոլորս շարժվում և շնչում ենք, որը մեր ամենավերին հագուստից սկսած թափանցել է մինչև ոսկրների ծուծի խոր քջիջները: Ես կարծում եմ, որ եթէ արուեստական մի որևէ հնարով կարողանայինք միանգամից դուրս քաշել մարդկային բնտանիքի միջից բոլոր նրա մէջ գտնված ստուգիւթիւնները, մենք մեզ կզգայինք ինչպէս օդից զրկված և նրա պակասութիւնից կսկսէինք խեղդվել:

Կեղծաւորութիւնը քաղաքակրթութեան հետ զուգընթաց է աճում, որովհետև ուր տիրում է միայն բռնութիւն, այնտեղ կեղծաւորութեան տեղ գոյութիւն է ստանում ստրկութիւնը, մինչդեռ այնտեղ, որտեղ ազատութիւնը յարգանքով է վերաբերում դէպի այն զանազան և հակառակ ուժերը, որ կոչվում են անհատի շահ և հասարակութեան բարեկեցութիւն, կիրք և օրէնք, գաղափար և կոստութիւն, հէնց այստեղ էլ կարողանում է զարգանալ կեղծաւորութիւնը:

Էլ ինչո՞ւ գանգատվենք, երբ կեղծիքը մեզ զիմաւորում է դեռ օրօրոցում և ընկերանում է մեզ

մինչև գերեզման. երբ նա մեզ հազցնում, կերարակրում, փաղաքշում է, երբ մեզ մխիթարում է տանջանքների ժամանակ, զուարճացնում է մեր տխուր յուզէներին, երբ տրամադրում է մեզ բոլորիս համարել ազատ, բարի և բաղբաւոր: Նա բթացնում է խայթոցը, կոլորացնում է փուշը, հարթում է ճանապարհի խութերը, ներկով ծածկում է տգեղութիւնը, սվալում է մեր տներին ճեղքվածները և պահպանում է երերվող տաճարի պատերը. նա մեզ է խառնում դառնիճին, զովացնում է ջերմը, տաքացնում է սառուցը, նա ճիւրանները ծածկում է ձեռնոցով, մեր մարմնի ամօթալի մասերը վարտիքով ու շրջագետտով, արատները՝ իւզով, և սապատը՝ կորսետով. նա բռների տակ թագցնում է աստուածահայհոյութիւնը, իսկ քաղաքավարութեան տակ՝ դաւաճանութիւնը: Նա ուզում է ոսկրացաւով հիւժժողներին և ախտահանում է մեզ շրջապատող հազարաւոր զարշահոտ փտումները: Էլ ինչո՞ւ գանգատվենք:

Օրհնեալ լինի այս աղբանոցը, որ երկրի խոր ծոցում թաղցնում է մեր մարմնի, առաւելապէս մեր հոգու ապականութիւնները: Օրհնեալ լինի այն միջոցը, որ ներկում է ճերմակ մազերը, յարգարում է կնճիւղը և նուազարիւն շրթունքներին կարմրութիւն է տալիս:

Հարիւր անգամ օրհնեալ կլինի այն բարեհամբոյր բժիշկը, որ կտալի մեզ բոլորիս գեղեցիկ երեւոյթ, երեւոյթ բարի, իմաստուն, և — որ ամենից լաւն է — ազատ քաղաքացիներ, հաւասար արդարագատութեան բազմահատոր օրհնքների առաջ:

Եւ օրհնեալ կլինի հարիւր, հազար անգամ մեր դարը, ջրային՝ ֆիզիքապէս և կեղծաւոր՝ բարոյապէս, այսինքն աւելի կեղծ, քան անցեալ և ապագայ դարերը:

Քուռնցքի ոյժը և ուժեղի յատկութիւնը մենք փոխել ենք խորամանկութեան սրամիտ հնարքների նուրբ, ճարպիկ, լաւ կրթված խորամանկութեան, որ թոյլ չի տալիս ժամացոյց գողանալ, բայց թոյլ է տալիս միլիոններ յափշտակել, միայն ճարպիկ, քաղաքավարի և արժանապատիւ կերպով:

Կոպիտ ուժը մենք փոխարինել ենք թոյլատրելի, ազնիւ, քաղաքավարի բարոյականութեան, և այն բնութի համար, որոնք յանգնում են բռուռնցք կամ դանակ գործածել, մենք պատրաստում ենք լաւ կահաւորված և լաւ պատրաստված սենեակներ, որոնց բանտ ենք ասում: Մենք ջընջել ենք դահճի պաշտօնը, հանգրեկ ենք խարոյկը, բայց սպանում ենք մեծ շափերով, պատերազմական գումարտակների հնչիւն երգերի ներ-

դաշնակութեամբ և թնդանօթների գրգռւնով և եթէ կուէի դաշտում մնում են մեռածներ, սրանք փառաբանված նահատակներ են, որոնք պարտաւոր են շնորհակալ լինել մեզանից, որ մենք այդպէս հերոսաբար, ազնիւ և գեղեցիկ եղանակով գրկում ենք կեանքից, որպէս զի սպրտիների թիւը մեզ շատ ծանր չզգայ և մեր քաղաքների փողոցները փոքր ինչ ախտահանած լինենք:

Ո՛վ արդար, ո՛վ սուրբ, ո՛վ աստուածային կեղծաւորութիւն, եզիր օրհնեալ և քեզ հետ թըղենու այն առաջին տերը, որ Եւան սովեց գիտութեան բարւոյ և շարի ծառայ: Գու, ո՛վ հրաշագործ տեր, դու դարերի աստիճանաբար զարգացման ընթացքում ձեռնախօսեցիր հագուստի, որ ծածկում է մեր աղքատութիւնը, օրհնքների անմահ երեսների՝ ուր շուայում են արդարութիւն, դու անկերջ ընդարձակելով ու երկարելով ծածկում ես հիւանդին մահճի մէջ և դիակը՝ նրա գերեզմանի մէջ, դու ծառայում ես իբրև մաջիւն ամեն փորձանքների համար, և ամենալաւ դարմանն ես բոլոր տանջանքների համար, դու մեր բոլոր բարեգործութեանց գլխաւորն ես, դու համեստագոյնն ես մեր ցանկութիւնների մէջ, ի՛նչպէս համարձակվեմ քեզ յանցանք համարել, ո՛վ դու, մարդկային առարկնութեանց մէջ աստուածայինը:

Ք Ն Ո Ւ Խ Ք.

ՏԵՐՏԻՔԻ ԹՎԳՆՈՐՈՒԹԵՆ ՍԱՄԱՆՆԵՐԸ

Ի միջի այլ հրաշալիքների, որ կատարվում են կեղծաւորութեան սրբերի կամ կախարդի դիմակի տակ, ի միջի այլ ցատկումների, որ կատարվում են նրանով, որոնք աւելի վերագանց են քան կապիկներինը, ի միջի այլ ձեռնածուական վարժութիւնների, որ յետ չեն մնալ օդի թագուհի Զէօի ճարպիկութիւններից, կեղծաւորութիւնը կատարում է և այն հրաշքը, որ կարողանում է շօշափել մարդկային բնութեան բոլոր բեռները:

Ամեն մի երկիր երկու կամ երեք սահմաններով միանում է ուրիշ երկրների հետ. բայց Տարտիւֆի տիրապետութիւնը ընդգրկում է այնքան պետութիւններ և այնքան հասարակութիւններ, որ նրանք կազմում են ամբողջ մարդկային աշխարհը: Ահա թէ ինչու հեշտ է մի աշխարհագրական քարտէզ նկարել, քան Տարտիւֆի տիրապետութիւնը: Մինչև անգամ նշանաւոր աշխարհագրագետներ և քարտէզագետներ աշխատել են կատարել այդ յանդուգն ձեռնարկութիւնը, բայց ստիպվել են հրա-

ժարվել նրանից, միանգամայն անգոր զգալով իրանց:

Ես էլ այդ նպատակով մի համեստ փորձ արի խորհուրդ հարցնելով Իտալիայի ամենազիտնական աշխարհագրագետ Մալֆատտիից և ամենայայտնի քարտէզագիր Գվիլո Կորայից, բայց չնայելով նրանց ուսուցանելուն, ստիպված եղայ գէն պցել կարկինն ու մատիտը և ինձ յալթված զգալ:

Աշխարհագրագետները նկարագրում են այնպիսի երկրների մասեր, որ չեն տեսել, իսկ քարտէզագիրները գծում են այնպիս տեղերի քարտէզներ, որոնց ոչ մի անգամ նոյն իսկ հեռագրատակով չեն դիտել: Մինչդեռ ես մտայ Տարտիւֆի մեծ թագաւորութեան բոլոր հովիտները, բարձրացայ նրա բոլոր բարձրութիւնները, վազեցի բոլոր հարթութիւնների վրա, լողացի բոլոր գետերի, գետակների, վտակների, լճերի մէջ, բայց և այնպէս այս աննիւն հետալօտութիւնները ինձ ամենևին չօգնեցին և ընդարձակ քարտէզը պատրաստ չէ: Այս անիծեալ երկրում ցամաքն ու ջուրը լեռ ու դաշտ և ծովերն այնպէս են հլուսվում իրար հետ և այնպէս են միանում ուրիշ երկրի ջրի և ցամաքի հետ, որ երբէք չես կարող ասել արդեօք Տարտիւֆիայումն ես գտնվում, թէ նրա հարևան երկրում: Ես մինչև անգամ չեմ կարող

ասել սա կղզի է թէ ցամար: Բայց եթէ դանակը կօկորդիս բռնած ինձ ստիպէին մկրտել և անուն տալ այս թագաւորութեան, ես կասէի. Սա լաբիրինաների լաբիրինան է*):

Մի անգամ մտքիս մէջ ջնեց մի լուսաւոր ճառագայթ և ես յուսադրվեցի հասնել իմ հետախուզութեան նպատակին, ես զբաղված էի Տարտիւֆի թագաւորութեան այնտեղի գծագրութամբ, ուր ցանկանում էի տեսնել այդ թագաւորութեան ծածանող գրօշակը: Ես տեսայ այս գրօշակը, բայց սա այնքան բազմերանգ էր, կամ աւելի ճիշդ է ասել, այնքան անորոշ և անհաստատ գոյն ունէր, որ ամեն մի մտիկ տալիս ես ուրիշ գոյնով էի տեսնում:

Ծիածանը գոնէ ունի եօթը գոյն. բայց Տարտիւֆի գրօշակը քամելիօնի պէս միշտ փոփոխական է: Մէկ լինում է գծգոյն մոխրագոյն, նման տաժանակիր աշխատանքի դատասպարտվածին, որ բռնվել է հէնց սփր կատարելու տեղում, միւս անգամ կարմիր՝ նման այն օրիորդին, որ յանկարծ փողոցում պատահում է իր սիրեկանին, մի ուրիշ անգամ սաստիկ գունատվում է նման այն մարդուն, որ փնտռում է պաշտօնական լրագրում վաղուայ սպասած չբանշանը և չի գտնում: Եւ այս գոյների արանքներում երևակայեցէր հուովմէ-

տկան մոզայիկայի*) հարիւր հազարաւոր գոյները և դուք կստանաք քամելիօնի և Տարտիւֆի գրօշակի գոյների թոյլ պատկերը: Ահա թէ ինչու գրծուար, նոյն իսկ անկարելի է այս երկրի հպատակ մարտնենդներին բռնել, ուստի և հարևան երկրների սահմանապահ պաշտօնեաները վաղուց ձեռնվառի են մնացել:

Եւ այսպէս, երևակայեցէք, որ մի անգամ ինձ թւաց թէ ես Տարտիւֆի տիրապետութեան մէջ գտել եմ մի գետ, որ երկու ծայրով շօշափում էր միւլնոյն ցամարը: Դանդաղ առաջ գնալով ես գծագրում էի գետի լայնքն ու երկայնքը իմ քարտէզի վրա նշանակելով նրա երկար կեռամաններն ու պտոյտները. ես պատրաստ էի գոչել յաղթութիւն, յաղթութիւն, երբ յանկարծ նկատեցի, որ ես գտնվում եմ միւլնոյն տեղում, որտեղից շարժվել էի: Այս նգովեալ երկրում կարծես գետերն էլ վերագառնում են իրանց ակունքներին:

Սակայն ես ցանկութիւն չունենալով շփոթել նրանց, որոնք լաւ ուժերով պատրաստ են այդ նախաձեռնութիւնն յանձն առնել և գծագրել Տարտիւֆի թագաւորութեան իսկական սահմանները, իմ կողմից ես կտամ նրանց այն չնչին տետեղեկութիւնները, որ իմ երկար և անզգրում հետախուզութեանս արդիւնքն են:

Ես գտել եմ, որ կեղծաւորութիւնը շփոխում է բարւոյ և շարի, ծաղրականի և մեծի բեւեռներին, որ նա, ուրիշ խօսքով, ընդգրկում է մարդկային ամբողջ բնութիւնը: Այժմ մտածենք, արդեօք այս տեսակէտը փաստերով էլ հաստատուում է, այնպիսի փաստերով, որ կարող ենք աչքով տեսնել և ձեռքով շօշափել:

Ուրիշների տանջանքներին կարեկցելը ստիպւում է մեզ ամեն օր ստել, և այսպիսի դէպքերում սուտը ոչ թէ վիրաւորական, այլ նոյն իսկ լաւ քայլ է համարվում և մենք այնքան ենք սովորել կեղծ կարեկցութեան, որ մինչեւ անգամ ատում և արհամարում ենք ստելու, կեղծելու անբնդունակ մարդկանց: Օրինակ. մեր մի որևէ հաղապիւտ տաղանդի տէր բարեկամը անձնական գործերի մէջ երբէք ուղիղ ճանապարհ չի գտնում և շատ անյաջողութիւններից յետոյ մնանկանում է: Եւ ասան մենք չիմանալով թէ բանն ինչումն է, սկսում ենք նրան մխիթարել թէ դեռ ամեն բան կորած չէ, դեռ կարելի է քայքայված գրութիւնը կարգի բերել, կամենալով այդպիսով նորան հանել յուսահատութիւնից ու փոքրոգութիւնից:

Մի ուրիշ անգամ բարակացաւով տանջվող խեղճի մէկը, որին վաղուց չենք պատահել, անհանգիստ սրտով հարցնում է մեզ. «Ինչպէս էք

գտնում այժմ իմ առողջութիւնը»: Ինչ մենք մըտքներումս նրա մահուան գատավճիռը դնելով, աշխատում ենք ժպտալ և պատասխանում ենք. «Չասլաւ. ձեր աչքերը վառ են, էս մինչև անգամ կարող եմ ասել, որ դուք առողջացել էք. համբերութիւն ունեցէք, կգայ տարուայ լաւ եղանակը և դուք բոլորովին կառողջանաք»:

Որքան խօսք, այնքան սուտ:

Ծանօթ բանաստեղծը երկար չարչարվելուց յետոյ ուղարկում է ձեզիւր ոտանաւորների հատորիկը, ուր չկայ ոչ գաղափար, ոչ ոգևորութիւն և ոչ գեղարուեստի նշոյլ և խնդրում է ձեր կարծիքը:

«Ես բանաստեղծ չեմ, պատասխանում էք դուք, ուստի չեմ կարող ձեր ստեղծագործութեան գատաւարը լինել: Ես կարող եմ ասել միայն, որ ձեր սուղարկած հատորիկը հաճուքով կարգացի և ինձ թւում է, թէ ես գտայ այնտեղ զօրեղ ոգևորութիւն և գեղարուեստի նուրբ հասկացողութիւն: Յամենայն դէպս կրկնում եմ, իմ քննադատութիւնը ոչինչ, ոչինչ նշանակութիւն չունի»:

Որքան բառեր, այնքան սուտ:

Դուք հրաւիրված էք մի ընտանեկան խնջույքի և ճաշից յետոյ տան տէրը խնդրում է իր աղջկան դաշնամուրի վրա նուագել մի որևէ կլասիքական պիեսսա:

Տէր Աստուած, ինչ երկար սօնատ է, ինչպէս վատ է նուագում, ինչ ձանձրոյթ և տանջանք է պատճառում...

Պիեսան վերջացաւ. օրիորդը ճակատի քրտինքը սրբում է. կեղծիքը խաղում է նոյն իսկ աւելի համարձակների շրթունքների վրա, իսկ ձեռքերը, որ շրթունքներից աւելի անամօթ են, դեռ ծափահարում են կեղծաւորութեան սրբազան կրքի ազդեցութեան տակ:

Որքան ծափ, այնքան կեղծիք:

Բաւական է այս մի քանի օրինակն էլ այն անհամար ստերից, որ դուր ամեն օր ասում կամ լսում էք դահլիճներում, փողոցներում, թատրոններում, ուսումնարաններում, ամեն տեղ, ուր մարդ կայ, որը տանջվում է կամ կտաջվէր, եթէ դուր նրան ասէիք դառն ճշմարտութիւն:

Իհարկէ, կան կեղծաւորութեան ուրիշ, շատ լաւ արտայայտութիւն ձևերը, որոնք նկատվում են խելօք տղամարդկանց և գեղեցիկ կանանց մէջ, որոնց խելքն ու գեղեցկութիւնը միաւորվում են համեստութեան հետ:

Ինքը համեստութիւնը մի առաքինութիւն է, յազեցած կեղծաւորութեամբ: Դա սուրբ, դուրեկան կեղծաւորութիւն է, որ ազատում նախանձոտ ամբողխն և հակառակորդ ընկերներին ամե-

նածանր տանջանքներից:

Համեստութիւնը մեր նախաձնող Եւայի թրգենու տերնն է, որ ծառայում է խելքի փայլն ու գրաւիչ գեղեցկութեան պայծառութիւնը ծածկելու համար: Ինչպէս կարող էինք մենք, ամբողխ մարդիկս, տանել այդ փայլը, այդ պայծառ լոյսը, եթէ ծածկված չլինէր համեստութեամբ:

Մեծ, բայց համեստ մարդուն, գեղեցիկ բայց ոչ հպարտ կնոջ տեսնելիս մեր ստացած բաւականութիւնն այնքան մեծ է լինում, որ համարեա թէ պատրաստ ենք համեստութիւնը հանճարից բարձր դասել, աւելի բարձր, քան նոյն իսկ գեղեցկութիւնը և մենք այդպիսի դէպքերում բացականում ենք, այդքան վեհ և այդքան համեմատ, այդքան գեղեցիկ և այդքան խոնարհ:

Մինչդեռ գեղեցկուհին յոգեղների շրջանում եղած ժամանակ, երբ չի կարող սքողել իր դէմքի խաղացող և նրա կաշւի խորշիկներից արտացոլող փայլուն ճառագայթները, ակամայից հոգեկան աղտակ է տալիս ներկայ եղածներին: Նոյնը պատահում է և կարող խելքի, զօրեղ կամքի տէր մարդկանց հետ՝ տգէտների շրջանում:

Ես չեմ հերքում, որ համեստութիւնը երբեմն անկեղծ է լինում, երբ մարդ իր ուժերը չափում է և համեմատում այն բարձր ձգտման հետ, որին

ցանկանում է հասնել, երբ համեմատում է իր արածը այն անելիքի հետ, որ պարտական է անել, ուրիշ խօսքով երբ համեմատում է իրականը գաղափարականի հետ. բայց հարիւրից իննսուն դէպքում մեր համեստութիւնը միայն կեղծաւորութիւն է, ողորմելի սուտ, որին մենք դիմում ենք, որ մեր մեծաւորի աչքը չծակենք և չկուրացնենք ամբողջի տեսողութիւնը, որ անկարող է արևի լոյսին մտիկ տալ:

Կեղծաւորութիւնը չարութեան բևեռին աւելի շուտ է հասնում քան բարութեան, որովհետև նա ինքն հէնց չարութիւն է, որովհետև նրա ճշկուն և դիւրաթեք բնաւորութիւնը ընդունակ է դարձնում նրան ամեն տեսակ խաբեբայութեան, ամեն տեսակ ստորութիւնների և ամեն անտակ մատնութեան:

Սկսած կեղծ սիրոյ գործադրութիւնից մինչև կեղծ թղթադրամների շինելը, ընտանեկան դաւաճանութիւնից մինչև հայրենիքին դաւաճանելը ամեն տեսակ ստորութիւն, ամեն տեսակ ոճրագործութիւն կարօտում է Տարաիֆի դիմակին:

Բայց այստեղ ես պիտի կանգ առնեմ, որովհետև իմ գրկոյքի նպատակն է ձեզ տալ կեղծաւորութեան զուարճալի հոգեբանութիւնը և ոչ ոճրագործութեան պատմութիւնը, որ ուսումնա-

սիրլած է հին և նոր շիօլային պատկանող շատ դիտնականների կողմից:

Եթէ այդ հրաշագործ Տարաիֆը կարողանում է գրաւել բարւոյ և շարի բևեռները, ապա նա ընդունակ է և ուրիշ մեծ հրաշքներ կատարել, այն է՝ անցնել ծաղրականի բևեռից դէպի մեծութեան, բարձրի բևեռը:

Ծաղրականի մասին Լեօպարդին*) գրել է այնպէս գեղեցիկ մի երես, որ արժէ առաջ բերել, արժէ հէնց նրա համար, որ ես հանճարեղ յոռետեսից աւելի լաւ չէի կարող մօտենալ այդ խնդրին: Լսեցէք նա ինչ է ասում.

«Մարդիկ երբէք այնպէս ծաղրելի չեն լինում, ինչպէս այն ժամանակ, երբ կամենում են երևալ կամ լինել այն, ինչ որ իրականապէս չեն: Աղքատը, տգէտը, գիւղացին, հիւանդը, ծերունին երբէք ծիծաղելի չեն, եթէ չեն կամենում ուրիշ բան երևալ. բայց նրանք ծիծաղելի են, երբ ծերն ուղում է շահիլ երևալ, հիւանդը՝ առողջ, աղքատը՝ հարուստ, տգէտը՝ գիտուն, խի գիւղացին՝ քաղաքացի: Նոյնպէս մարմնական արատը, որքան էլ զգալի լինի, գուցէ մեր կարեկցութիւնը շարժէր, եթէ մարդը չաշխատէր ծածկել այն. այսինքն ձևանար, թէ այդ արատները չունի: Խելքը վլիսին մարդու համար գժուար չէ նկատել, որ

մեր պակասութիւնները չեն ծիծաղելի, այլ ծիծաղելի են այն ցանկութիւնները, որ աշխատում ենք ծածկել դրանց և ձևանալ թէ ամենևին չունինք:

«Առհասարակ ցանկանալ երևալ այն, ինչ որ չենք, աշխարհումս ամեն բան փշացնում է. և այս է պատճառը, որ շատ մարդիկ անտանելի են դառնում մեզ համար, որոնց գուցէ յարգէինք, եթէ նրանք բաւականանային իրանց ունեցածով և չը աշխատէին աւելին երևալ: Եւ այս կարելի է ասել ոչ միայն անհատների համար, այլ և ամբողջ ազգութիւնների համար»:

Թէև ասում են մեծութիւնից մինչև ծաղրականը մի քայլ է միայն, բայց այդ քայլը այնքան էլ փոքր չէ և միայն Տարտիւֆ թագաւորը իր շատ երկար ոտներով կարող է այդ լօքը անել:

Կայ ձևանալու տեսակը, որ իսկապէս առաքինութիւն է. օրինակ, անկարօտ ձևանալ, որպէսզի մարդ պահի իր արժանապատուութիւնը, որպէս զի ուրիշների կարեկցութիւնը չշարժի, ցոյց չտայ թէ օգնութեան կարօտ է, այնպիսի օգնութեան, որ իբրև ողորմութիւն պիտի տային նրան և սա չպիտի կարողանար ընդունել—յատուկը գորեզ և առնական բնաւորութեան:

Ծածկել այն ծանր ամենօրեայ զոհողութիւն-

ները, որ արվում է իր բարեկամներին երբեիցէ օգնելու մտադրութեամբ՝ առաքինութիւն և հետոսութիւն է:

Ծածկել բարոյական կամ ֆիզիքական արատը և անբուժելի տանջանքները, որպէսզի չկործանի իրան սիրող արարածների յոյսը-շատ դժուար գործ է, բայց յաջողում է մեծահոգի մարդկանց:

Բայց ծածկել իր անձնասիրութիւնը, որպէս զի չնսեմանայ ուրիշի սնափառութիւնը, հրաժարվել մրցութիւնից, որ հաւանականաբար կշահէինք, որպէս զի մրցանակը տանք բարեկամին, որդուն հօրը—նշանակում է անել այն կեղծաւորութիւնը, որի համար բառարանում պիտի նշանակել ուրիշ բացատրութիւն, քան որ մենք գործ ենք անում Տարտիւֆ թագաւորի հագուստերի համար:

Արեան խենջարը հանկոյով իր կրծքից և տալով Պետտուն ժպտալով և ասելով «Ա, չի ցաւում», ասել է ամենամեծ սուտը: Բայց շատ թանկագին ստեր ասվել և ասվում են ընտանեկան շրջանում, որ թէև պատմութեան մէջ մտնելու չեն արժանանում, բայց պահվում են մարդկային ընտանիքի պատմութեան մէջ իբրև գոհար, որ կազմում է մեր բարոյական մեծութեան բարձր և հագուստիւ ժառանգութիւնը:

ԻՆՉՈՒՆ ՀԱՄԱՐ ՄԵՐ ԴՍԻՍ ՄԻՆՍ ԴԱՐՆԵՐԻՑ ԱՌԵԼԻ ԱՐԺԱՆԻ Է
Կ Ե Ղ Ժ Ա Ի Ո Ր Կ Ո Չ Վ Ե Լ Ո Ւ

Նախքան մարդկային կեղծաւորութեան զանազան ձևերի, Տարտիւֆի թագաւորի զանազան հագուստների ուսումնասիրութեան անցնելը, ես պիտի արդարացնեմ մեր դարը այդ անունով մըկրտելը, որովհետև այլապէս կարող են ինձ մեղադրել բամբասանքի մէջ:

Ինչպէս կարող էք համարձակութիւն ունենալ մեր դարը մեղադրելու կեղծաւորութեան մէջ, երբ դուք էք ասում, որ նա ծնվել է առաջին մարդու և կնոջ հետ. կասեն ինձ:

Մարդը միշտ, ամեն ժամանակ ունեցել է միևնոյն յանձանքներն ու միևնոյն առաւելութիւնները. փոխվում են միայն անունն ու արտաքինը. բայց բարւոյ և շարի բնութիւնը մնում է միշտ անփոփոխ:

Քացարէք Սուրբ Գիրքը, այդ գրքերի գլուխ գործոցը և դուք կհամոզվէք, որ դեռ Քրիստոսից հազար տարի առաջ կանայք սեղոյրով շղարում

էին իրանց երեսները, որ գեղեցիկ երևան: Թագաւորաց երկրորդ գրքի իններորդ գլխում պատմվում է Իզգաբէլլայի աչքեր սիւրմայելն ու գլուխ զարդարելը: Իսկ Նսայի մարգարէն, Քրիստոսի ծննդից 780 տարի առաջ, անհրաժեշտ համարեց սպառնալ Սիոնի գուտարներին, որոնք արուեստական բոլոր միջոցներով չափազանց զարդարվում էին:

Ասորեստանցիք, Քաբելացիք, Պարսիկները և Նսիայի ուրիշ ազգեր մեզանից շատ հեռու հին ժամանակներում սև ներկով ներկում էին իրանց յանքերն ու թերթերունքները և աչքի պոշում դնում էին սիւրմի կտոր, որ աչքը մեծ, գեղեցիկ և դուրեկան երևայ: Նրանք էլ կարողանում էին երեսներին ու շրթունքներին կենդանի գոյն տալ: Նս էլ չեմ խօսում հին հռովմի կանանց մասին, որովհետև Եւվինալի,* Մարցելլայի և ուրիշ հռովմէական գրողների երգիծանքները պահել են ապագայ սերունդների համար հարիւրաւոր խորապագայ սերունդների համար հարիւրաւոր խորամանկութիւնների յիշուլութիւններ, որանցով հռովմի կանայք կարողանում էին ծածկել իրանց մարմինը և մարմնական արատները: Եւ այս ֆիզիքական կեզծիքի հետ զարմանալի ներդաշնակութեամբ զուգորդում էին ձևանալը, դաւաճանութիւնն և մշտական խաբեբայութիւնները:

Պատմութեան մէջ համարեան չկայ մի երես, ուր չլիօսովի Տարտիւֆ թագաւորի մի որեւէ նոր յաղթութեան մասին: Ապա ինչո՞ւ համար, դու, սիրելի հեղինակ, մեր տասնեկիններորդ դարը կընքեցիր այդ ոչ յարգելի անունով:

Որովհետեւ, սիրելի ընթերցող, մեր դարաշրջանն, ուրիշ շրջաններից տարբերող շատ հոգեկան յատկութիւնների մէջ կեղծաւորութիւնը ամենից շատ է աչքի ընկնում: Որովհետեւ ամեն մի սլափմական շրջան ունի իւր մէջ մարդկային բոլոր տարրերը, բայց տարբեր ձևով և տարբեր համեմատութեամբ դասաւորված, որի համար էլ մի դարն արժանացել է ճգնաւորական, միւսը՝ ասպետական, երրորդը՝ պատերազմական և այլն անունների, նայելով մէկ կամ միւս տարրի գերակշռութեան:

Մարդկանց դէմքերն էլ բոլորն ունին երկու աչք մի քիթ, մի բերան, մի ծնօտ, բայց դէմքի իւրարանչիւր մասն ունի իր առանձնայատկութիւնը, որն առանձին կերպով հիացնելով մեզ, առիթ է տալիս բացականչելու ի՞նչ գեղեցիկ քիթ, ի՞նչ քնքոյշ բերան, ի՞նչ փայլուն աչքեր:

Տասնեկիններորդ դարը կարող է կոչվել, քննադատական, արդիւնաբերական, դրական, թերահաւատութեան և այլն դար, բայց ամենից առաջ

և ամենից շատ՝ կեղծաւոր դար:

Նա կեղծաւոր է, որովհետեւ ներկայացնում է մի անցողական շրջան տգիտութեան և բռութեան ժամանակների, որ դեռ չի թաղված անցեալի մէջ, և արդարադատութեան, ապագայ գիտնական առաջադիմական ժամանակների, որոնց վարդագոյն արշալոյսը երևում է հորիզոնի վրա. մեր դարը այս երկու հակադատկեր շրջանների արանքում անցողական շրջանն է ներկայացնում:

Քաղաքական օրէնսդիրքը արգելում է անձնաւորութիւնների ազգաբանութիւնն անել, բայց ինձ թւում է, որ թոյլ է տրվում հետախուզել դարերի ծագումը, որոնք չեն ներկայացնում անհատների առանձնական կեանքը, այլ միլիօնաւոր մարդկանց հաւաքական կեանքը:

XIX-րդ դարը — գոնէ Եւրոպայում — է 89 թւականի և դրան յաջորդող համարձակ, անհամբեր գիտութեան զաւակ:

Այս երկու ծնողների կատաղի, մինչև բռնութեան հասնելը և անսիրտ՝ մինչև վայրութեան հասնելը՝ ամուսնութիւնից առաջացաւ ջղային, անհամբեր և կամակոր զաւակը — անբաւական ներկայից, որովհետեւ շարունակ այն համեմատում է ապագայի հետ-ամենալաւ պանօրամայի հետ, որ ամեն օր մայրը ցոյց է տալիս նրան: Ուրիշ դա-

րեր բաւականացել են նրանով, որ եղել են զօրաւոր կամ ճգնաւորական: Զօրեղները սեպհականացրել են: սեղանի ամենալաւ պատառը, [Թոյլերըն անխռով վերցրել են փշրանքները: Չափազանց հետաքրքրվողների, որոնք համարձակուամ էին ներկան անցեալից բաժանող վարագոյրի մի անկիւնը բացանել տեսնելու [Թէ արդեօք միւս կողմում լաւ բնակարան կամ առատ սեղան չկայ, այդպիսիների ձեռքերը կամ նոյն իսկ գլուխը կտրուամ էին:

Բայց ահա հասնում է 89 թւականը և երկիրը ներկվում է զօրեղների արիւնով, խոստանալով մինչև այդ օրը հալածվածների նոր շարագուշակ երրորդութիւն— աղաքու-Լիւն, հաւասարու-Լիւն, Էշ Բայրսիրու-Լիւն, որը երկար ժամանակ փայլում էր դրամների, դրօշակների վրա, բայց չունէր ոչ տաճարներ, ոչ քուրմեր և ոչ պաշտամունք:

89 թւականը ամուսնացաւ գիտութեան հետ, որը համարձակվեց ամեն տեղ մտնել, ամեն բան վերլուծել. և այդ ամուսնութիւնից առաջացաւ XIX-րդ դարը, որի արդար, անկեղծ, անաչառ պատմութիւնը կ'ըլլի մեր [Թոռների ձեռքով:

Փրանսիական յեղափոխութիւնը կամենալով ամեն մարդու տալ այդ երեք գանձը, որ դրված է նրա դրօշակի վրա, բռնակալական տրամաբանութեամբ պատժի միջոցաւ կամեցաւ հե-

ռացնել նրանց, որոնք համակարծիք չէին. կարծես [Թէ գիլետինը*) կարող էր ոչնչացնել գեռ չծնած արարածներին իրանց մայրերի արգանդում, որոնց երակներում հոսում էր իրանց ծնողների արիւնը, էլ չխօսենք այն մասին, որ մեծ կոտորածի ժամանակ շատերին է յաջուլում փախչել կործանող կրակից և ամբողջապէս պահպանել ընկածների գաղափարն ու համոզմունքները:

Եւ ծնվեցին նոր սերնդի գաւակները, որոնք մկրտվեցան ոչ [Թէ սուրբ ջրի մէջ, այլ 89 թւականի արեան մէջ. նրանց անուանեցին յեղափոխութեան գաւակներ և նրանք երեք խօսքից բաղկացած նշան ստացան. աղաքու-Լիւն, հաւասարու-Լիւն, Էշ Բայրսիրու-Լիւն:

Օրէնսդիրքը կարելի է միանգամից ոչնչացնել և տպել նորը, դրօշակները կարելի է այրել կամ ուղարկել ներկարարին, բայց մարդիկ, նրանց երակների մէջ հոսող արիւնը, նրանց ուղեգններում շրջանառութիւն անող հիւլթը փոխվում են շատ գանդաղ, ոչ [Թէ գահճի կացնի կամ [ժողանօթի հարվածի տակ, այլ գանդաղ և շատ սերունդների աստիճանական զարգացմամբ:

Աֆրիկայում, Ասիայում և Ամերիկայում եւ շատ անդամ տեսել եմ նեգրեր, հնգիլներ և վայրենիներ, որոնք հագնում են Եւրոպական հա-

գուստ և գտել եմ նրանց շատ ծիծաղելի և զուար-
ճալի դրութեան մէջ — կատարեալ կապիկներ ծաղ-
րածուի հագուստով: Բարոյականի տեսակէտից
մենք — XIX-րդ դարի մարդիկս — բոլորս նման ենք
նրանց. մենք դեռ պատկանում ենք միջին դա-
րերին, բայց հազնում ենք ժամանակակից հա-
գուստ, ուրիշ խօսքով մենք վայրենիներ ենք, բայց
հազած նոր ազատութեան և նոր գիտութեան
հագուստը:

Երբեկիցէ տեսել էք կապիկի խղճալի գէմքը,
երբ պարկապզուկի ձայնի աղղեցութեան և մրտա-
րակի շրխիոցի տակ ստիպվում է ուղիղ կանգնել
մարդու պէս, ահա մենք բոլորս-կատաղի յեղա-
փոխութեան և մանուկ գիտութեան դաւակներս —
նման ենք այդ խեղճ կապիկին մարդու շորեր
հագած:

Եւ մենք կանգնած ենք ուղիղ, նայում ենք
դէպի երկինք, երկինք ամենամաքուր և լայն գա-
զափարի, իդէալիզմի, ուր ոչ թէ չենք կարող
ձեռքներս հասցնել, այլ մեր աչքերն իսկ անկա-
բող են տեսնել, եթէ ամենազօրեղ հեռագիտակ-
ներով չեն զինված:

Մեզ ստիպում է ուղիղ կանգնել հոգեկան խա-
բազանը և իդէալիզմի նուազը, բայց ամեն թույլէ
մենք աշխատում ենք մեր բնական դիրքն ընդու-

նել, որպէս զի ազատ քորվենք և կուենք այն կեղ-
տոտ միջատների հետ, որոնցից 89 թւականը չը
կարողացաւ մեզ փրկել:

Մենք յարգում ենք օրէնքն այն ժամանակ,
երբ գանվում է դատաւորների և զինւորների ձեռ-
քին, բայց յաճախ ամեն յարգանք կորցնում ենք
և խուսափում ենք նրանից: Մենք գնահատում
ենք 89 թւականի սկզբունքները, բայց աշխա-
տում ենք ձեւել այն, յարմարացնելով մեր դեռ վայ-
րենի ճաշակին:

89 թւականի մարդիկ սրբագործեցին երկար
դարերի տանջանքները բոլորի համար արդարա-
դատութիւն խոստանալով, բոլոր բարի ցանկու-
թիւններին՝ ազատութիւն և բոլոր անհաւասար
իրաւատէրերին՝ եղբայրութիւն: Բայց արդարու-
թիւնը շատ յաճախ սաստիկ թանկագին դեպ է
համարվում. տգէտները ժխտում են ազատութիւ-
նը, իսկ եղբայրները — սրանք այն մարդիկն են, ո-
րոնք չեն կարող իրանց ազատութիւնից օգտուել
առանց հարստահարելու ուրիշների ազատութիւ-
նը: Եւ այս երեք իդէալները, որ գրված են մի
տողի մէջ, այնքան հեռու են մեզանից, այնքան
զժուար է դրանց հասկանալն ու ձեռք բերելը,
որ մենք առ այժմ գանվում ենք նրանց զեղեց-
կութիւնը հեռուից դիտելու դրութեան մէջ:

Եւ այն ժամանակ, երբ մի կողմից հասարակական իդէալիզմը իբրև ֆատամօրզան — կրրկիներույթ մեղանից հեռանում է այն չափով, որ չափով որ մենք ուզում ենք մօտենալ նրան, միւս կողմից անխիղճ անողոր գիտութիւնը կործանում է հին տաճարները, չմտածելով, որ պիտի նորերը կանգնեցնել: Հողը լաւ մաքրելուց յետոյ բահով և բրիչով բաց է անում մեր մոլորակը, ուսումնասիրում է ամեն մի ճեղք, տաշում է ամեն մի ժայռ և մաքրում է ամեն մի աղիւս և եթէ մէկը հարցնի նրան. «Թշուառ, ի՞նչ բանի ես:» Նա աներկիւղ կպատասխանի. *Հշմարտութիւն է՞ մարտութիւն է՞* Իբր թէ երբ և իցէ ճշմարտութիւնը կարող է լիուրի բաւականութիւն տալ մարդուն, այն մարդուն, որ ամաչելով իր մերկութիւնից, հագուստ հագաւ իսկ երբ հագնովեց, կերաւ և խմեց, իսկ երբ լաւ քնեց ու սիրեց, էլի դեռ դժգոհ, պահանջեց ձեռնածու, որ իրան յոգնեցնի, բանաստեղծ ուզեց, որ իրան զբաղեցնի այնպիսի բաներով, որոնք երբէք չեն եղել և չեն լինիլ:

Եւ այս բոլոր ներքին կռիւց յետոյ, որ մարդուն դարձնում է չափազանց կոպիտ թշնամի իր մերձաւորի համար, այս բոլոր անօգուտ կռիւց յետոյ, որ շարունակվում է ամբողջ դարեր, դուր դեռ համարձակվում էք հարցնել ինձ թէ ի՞նչ ի-

րաւունքով եմ ես մեր դարը կեղծաւոր անուանում, դուք դեռ զարմանում էք թէ ինչնու կեղծաւորութիւնը տիրապետում է մարդկային բոլոր գործերում:

Իսկ կեղծաւորութիւնը գոյութիւն ունի և ընդարձակվում է ամեն օր նրա համար, որ մէկ կողմից մենք չենք ցանկանում վերադառնալ մեր նախնիքների երանելի անյայտութիւնը, իսկ միւս կողմից չենք համարձակվում վերջացնել մեծ հասարակական յեղափոխութիւնը, որ սկսվել է 89 թւականներից:

Եւ այս կեղծաւորութիւնը դեռ երկար կշարունակվի, որովհետև մենք կարօտում ենք ստութեան թանձր ծածկոցին, որ ծածկէր մեր բոլոր ստորութիւններն ու վայրենութիւնները:

Մենք դեռ մարդակերներ ենք, բայց նոր քաղաքակրթութեան հագուստը հագած մարդակիրներ: Ձեռնոցները մեզ չզրկեցին եղունգներից, վարտիքները չսպանեցին մեր մէջ անասնական կրքերը, իսկ մարմարէ տները կամ տաճարները չոչնչացրին դէպի գոգութիւն, սպանութիւն, դաւաճանութիւն ձգտումները:

Սակայն այս չի խանգարում մեզ ցանկանալ հրեշտակ լինել: Մեր ոտները գտնվում են տիղմի մէջ, կեղտոտ են նրանք թէ ոչ, միևնոյն է. մեր

գրքերում, գալրոցներում, եկեղեցիներում, մենք գեռ շօշափում ենք մեր կողերը, որ իմանանք, արդեօք թևեր չեն ծլել, որ մեզ պիտի տանեն բարձր, ուր իսկապէս կարող է տիրել այն երեք իդէալը, որ 89 թւականը գծել է իր դրօշակի վրա:

Քայց որովհետև մենք պատկանում ենք խրմբական կենդանիների շարքին և չենք ցանկանում ներշնչել մեր եղբայրների գարշահոտութիւնը և ստիպել նրանց շնչելու մեր սեպհական կենդանական արտաթորումները, ուստի մենք կատարելագործել ենք իւղերի, անուշահոտ նիւթերի պատրաստութեան արուեստը, որը մեզ հնար է տալիս համբերել և տանել մէկ մէկու: Ժամանակ առ ժամանակ մենք մի քիչ սիրում ենք իրար, իհարկէ շնորհիւ սրբազան, օրհնեալ կեղծաւորութեան, որ հնարաւոր է դարձնում համակեցութիւնը և որը բարոյապէս գտում, ախտահանում և լաւացնում է մեզ:

Ապագայ դարը կազատվի իր նախորդի անունից միայն հետեեալ պայմաններում. եթէ նա վերադառնայ նախկին տգիտութեան և բռնութեան, կամ եթէ նա արիաբար և վճռականապէս կ'զրի բոլոր մարդկանց սրտերում և մտքերում այն իդէալները, որոնք մինչև այժմ զրկած են եղել մի-

այն մեր օրէնսգրքերում և մեր դրօշակների վրա: Երբ արտաքինը համապատասխան կլինի ներքին բովանդակութեան, սուտը կդառնայ անօգուտ արուեստ, իսկ կեղծաւորութիւնը կ'պահվի ապագայ հոգեբանական թանկարաններում այնպէս, ինչպէս այժմ պահվում են մեր նախնիքների չորրորդ դարաշրջանին պատկանած քարէ կացինները և նետերը:



Պ Ա Ռ Ի Խ Ե .

ՍՈՍԿԱԼԻ ԲԱՌԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ՉԵՒԵՐ

Մարդը ցանկանալով հնար եղածի չափ բա-
 ւականութիւն տալ իր ազնիւ, կէս ազնիւ իսկ
 երբեմն էլ անազնիւ ցանկութիւններին, առանց
 հրաժարվելու բարոյական արարածի պատուաւոր
 տիտղոսից, հնարել է երկու տարբեր բաներ ի-
 րար հետ հաշտեցնելու եղանակը, ստեղծելով
 սոսկալի և նզովեալ անուններ յանցանքներին կըպ-
 ցնելու համար և դարբնելով ուրիշ քաղաքավարի
 մեղմ խօսքեր, որ արտայայտեն նոյնպէս ոճրա-
 գործութիւնները, բայց սոսկում, ատելութիւն չը
 պատճառեն:

Լեզուաբանական այս կախարհութիւնը մե-
 նակ հերիք էր ապացուցանելու, որ մարդը եր-
 կրագնտի վրա ապրող արարածների մէջ առաջին
 և ամենամեծ կեղծաւորն է, որ նա Տարտիւֆնե-
 րից առաջինն է:

Բաց արէք մի օրևէ բառարան և Մ. տառե-
 ռերի շարքում կ'գտնէք սարսափելի բառ հասնո-
 թիւն: Ասացէք, ձեզանից ով կհամաձայնէր կատա-

րել մի այդպիսի ոճրագործութիւն, ով չէր ամա-
 չիլ լինել հասնիչ:

Բայց նոյն բառարանի ուրիշ բաժնում կգտնէք
 նախաբեռութիւն, խորհանդիսութիւն, զգուշութիւն: Եւ
 դուք կարող էք ամեն օր կատարել իսկական մատ-
 նութիւն, մնալով նախատեսող, զգոյշ, խորմանկ,
 բայց չլինել մատնիչ:

Ի՞նչքան զզվելի բան է պարունակում իր մէջ
 անառակ բառը և ով չէր վրդովիլ, եթէ նրան
 այդ անունը տային: Բայց ոչ ոք իրան վիրաւոր-
 ված չի զգում, երբ նրան անուանում են էանայի
 սեւին երկրագորչ, Էդիչուրեան, զգայան հարբ:

Ի՞նչ սոսկալի բառ է ամենանշան անհաս-
 րարհոթիւն, որ պատժվում է օրէնքով, իսկ մի
 ժամանակ պատժվում էր աւելի խիստ-բերդար-
 գելութեամբ կամ մահով: Բայց մի վախենաք.
 ներշնչումս հարբիչ գրաստան էն, սիրոյ մեջ փոքր են լե-
 լեամբիս են լինում չէրցնելով շրջապատուշների յարգանքը:

Չողորրութիւն — զզվելի բառ, որ արտա-
 յայտում է հոգու ամենազզվելի կողմը և ոչ ոք
 աշխարհիս վրա չի ցանկանում, որ իրան չողորր-
 թեն, բայց մենք առանց կարմրելու կարող ենք
 ընդունել կոմպլիմենտներ, առանց չողորրութիւն
 լինել ցանկանալու (Տէրը փրկի մեզ զրանից)
 հակառակ չենք լինիլ որ մեզ դատեն շեջաշարբ:

Ոչ ոք չի խոստովանիլ որ մէկին ատում է. բայց մենք կարող ենք միայն քաղաքավարի արհամարհանք զգալ: Ոչ ոք իրան ժլատ չի անուանիլ, այլ չափազանց խնայող: Ոչ ոք ծուլութիւն չի սիրում բայց ամենքը պաշտում են հանգստութիւնը:

Մենք կարող ենք մեր բոլոր քմահաճոյքները կատարել, նոյն իսկ նրանցից ամենայանցաւորները կատարել, միայն թէ նրանց չկպցնեն յանցարի սոսկալի անուն, այլ մեղմացնեն այն քաղաքավարի բառերով, որոնք գոյութիւն են ստացել մեր կեղծաւորութեան շնորհիւ:

Սովորելով քերականութիւն և ուղղագրութիւն, անգիր սերտելով նոյնանիշ բառերի բառարանը մարդը կարող ընդմիշտ ազատ լինել իր ստորութիւնների և ցածութիւնների իննտասներորդական մասից, որոնք կատարվում են կեղծաւորութեան այս մեհեանում:

Կայ ամենօրեայ, անհրաժեշտ կեղծաւորութիւն, որ կազմում է Տարաիւֆի սև փողերը, ամեն օր, ամեն ժամ ծախսելու համար, որը և կազմում է հասարակական կեանքի այնպիսի անհրաժեշտ մասը, որ իր վրա չի դարձնում ոչ ոքի ուշադրութիւնը: Սա փոխադարձ սիրաշահութեան ընթացիկ հաշիւն է, համակեցութեան տարրական այբուբէնը:

Վերլուծեցէք ձեր կեանքի մի օրուայ գործերը և դուք կհամոզվէք, որ գոնէ հարիւր սուտ անհրաժեշտ էր ասել այդ օրը խաղաղ անկացնելու համար թէ ձեզ ու ձեզ և թէ ուրիշների հետ: Սա իւր տեսակի անհրաժեշտ հացն է, առանց որի անկարելի է ապրել, թէև աստուածաբանները հաւատացնում են, որ ամեն մի սուտ պատրժվելու է դժոխքի եօթ տարուայ տանջանքով:

Գուք հազիւ դուրս էք գալիս անից և առաջին հանդիպումից առնուազը մի վեց կեղծաւորութիւն էք անում:

Պատահում էք մի որևէ ծանօթի, որին համարեա չէք ճանաչում և նրանով չէք հետաքրքրվում:

Գուք դիմաւորում էք նրան ժպիտով և գրլխարկ էք հանում:

Երկու կեղծիք մի անգամից: Ժպիտը բաւականութիւն է արտայայտում, մինչդեռ այդ մարդը ձեզ չի հետաքրքրում. գլխարկ հանելը յարգանքի նշան է, իսկ դուք պարոնին ամենևին չէք յարգում:

— Ես ցաւելով իմացայ, որ ձեր գործնչը հիւանդ է, ասում էք դուք:

«Այո, բայց այժմ, փառք Աստծու, փոսնպն անցել է» պտտասխտնում է նա:

— Ես շատ, շատ ուրախ եմ:

Երբորդ սուտ, որովհետև դուք այդ կնոջը չէք տեսել և չէք հետաքրքրվել նրանով:

— Կաղօթեմ Աստծուն, որ նա շուտ առողջանայ:

Չորրորդ սուտ, որովհետև դուք այդ երբէք չէք անելու:

«Ճնորհակալ եմ ձեր բարի ցանկութիւնների համար»:

— Յ'շուտափոյթ տեսութիւն...

Այդ շուտափոյթը հինգերորդ սուտն է:

Եւ դուք մի քանի վայրկենում կարողացաք հինգ անգամ ստել. իհարկէ ձեր բարեկամն էլ պարտ չմնաց, նոյն ձևով վարձահատոյց եղաւ:

Այսպիսով դուք ձեզանից և մէկմէկուց գոհ բաժանվեցիք և պարտատէր ու պարտապան ոչ ոք չմնաց:

Եւ այս ձեի կեղծաւորութիւնն այնքան անհրաժեշտ է դարձել, որ մենք կապիտ, տղէտ ենք անուանում նրանց, որոնք այդ հարկը չեն վրձարում Տարտիւֆի դարին և հասարակական պահանջներին:

Անհետաքրքիր, նոյն իսկ անհամակրելի ծանօթներին սովորական ժպիտով դիմաւորումից կեղծաւորութիւնը թափանցում է բոլոր սովորու-

թիւնների մէջ և տոգորում է մեր բոլոր շարժումներն ու դատողութիւնները:

Գիտի մարդ շատ միամիտ լինի կամ ունենայ մեծ բնաւորութիւն, որ վճռական կերպով սրբտանց և առանց տատանվելու կարողանայ արտայայտել իր կարծիքը ֆիզիքական կամ բարոյական որևէ խնդրի մասին:

Ժամանակակից մարդը նախ քան խօսք արտասանելը նախ ժպտում է, յետոյ նայում է խօսակցի աչքերին, հազում է, ապա գլուխն է շարժում ժամանակ վաստակելու համար, որպէս զի դիմացնի աչքերում կարգայ նրան ցանկալի կարծիքը:

Եթէ ձեր խօսակիցը ձեզանից աւելի կեղծաւոր է, այն ժամանակ պատահում է, որ ժպիտը, հազը, շարժումները փոխվում են անգոյն անկապ ձայների և պայմանական ներկայ, անցեալ ժամանակների, մինչև որ երկուսն էլ հեռանում են իրարից գոհ, որ իրանց կարծիքը մի որևէ ակնարկով անգամ չարտայայտեցին:

Կեղծաւորութիւնը կազմում է մարդկային բոլոր հիմքերի կենդրոնակէտը, թէ լաւերի և թէ վատերի, թէ բարձրների և թէ ծաղրականների և այդ կենդրոնը եթէ այնքան մեծացել է մեր դարում, որ ես, գուցէ առաջինը, անուանեցի Տար-

տիւֆի դար, այդ նրա համար, որ ոչ մի ուրիշ
դարաշրջանում այնպէս չեն ընդհարովել զանազան
և իրար հակասող տարրերը, ինչպէս մեր դարում:

Գուր պիտի գիտենաք, որ ժամանակով մեր մո-
լորակի վրա ապրում էին գեղեցիկ հրեշտակներ,
որոնք իրար սիրում էին, շնայելով որ բոլորը կա-
նայք էին: (Տղամարդիկ սեռական փառասիրու-
թիւնից դրդված հրեշտակներին տալիս են արա-
կան սեռ, բայց այդ շափազանց սուտ է, որով-
հետև բոլոր հրեշտակները կանայք էին) Եւ ահա,
մի անգամ սաղայելը նախանձելով նրանց բազ-
դին և այդպիսի գեղեցկութեան, իջաւ երկիր և
օգտուելով գեղեցկագոյն հրեշտակի քնած լինե-
լուց, բռնաբարեց նրան և այդ միաւորութիւնից
առաջացաւ մարդը: Ահա պատճառը, թէ ինչու
մեր երակների մէջ հոսում է հրեշտակի և սատա-
նայի արիւն: Երբ այս երկու հակառակ տարրերը
ընդհարվում են (իսկ այդ պատահում է ամեն օր)
այն ժամանակ մենք գնում ենք այն գծով, որ
երկրաշափութեան մէջ ասվում է *անհիւսափիծ*, իսկ
բարոյագիտութեան մէջ՝ *հեղձուորութիւն*:

Բայց կեղծաւորութիւնը ոչ միայն անկիւնա-
գիծ է, այլ և կոր գիծ է (թւարանները կիներին
ինձ այս անմեղ հայտոյանքիս համար): Ճշմարտու-
թիւն, ողբորութիւն, առաքինութիւն, հերոսու-

թիւն, հանճար – սրանք ուղիղ գծեր են: Այս յատ-
կութիւնից զուրկ մեծամասնութիւնը ապրում է
կեղծաւորութեամբ և այնտեղ գտնում է այն մի-
ջավայրը, ուր միայն կարող է ապրել, աճել և
բազմանալ:

Միջակութիւնը, որ ձգտում է վեր բարձրանալ,
բայց ընդունակ չէ հասնել նրան, է կեղծաւորու-
թիւն:

Գինեվաճառից ու հացավաճառից սկած մին-
չև գրողներն ու գրավաճառները բոլորն էլ մանր
ու խոշոր արդիւնաբերողներ են հասարակական
արհեստանոցում, որոնք պատրաստում և ծախում
են մեղ իրանց կեղծ արտադրութիւնները:

Գինեվաճառից, հացավաճառից, կաթնավա-
ճառից մենք ստանում ենք խարդախած մթերք:

Լրագրի խմբագիրը հրատարակում է թերթը
վրան նշանակելով յաջորդ ամսաթիւր:

Հրատարակիչը հրատարակում է նոր յիսու-
ներորդ հրատարակութիւն, ուր աւելացրած է գե-
րօն, և այդ իսկապէս նոր հրատարակութիւն էլ
չէ, կազմի թուղթն է փոխված:

Իսկ գրողը իբրև նոր հեղինակութիւն, տալիս
է բարեփոխված հինը:

Օրէնսգիրը տալիս է մեղ անճիշդ ճշմարտու-
թիւն, որ ունի միայն հաւասարութեան համա-

պատասխան արտաքին տեսքը:

Գաստիարակը տայիս է կեղծ գիտութիւն — սակեղօծ դրսից, իսկ ներսից՝ պղինձ:

Իսկ կանաչը տայիս են մեզ կեղծ կուրծք, իբրև մարմնի արտայայտիչ:

Իսկ ամբողջ աշխարհը շռայլում է կեղծաւոր ժպիտներ, էլէքտրացած ձեռք սեղմելը, սնդոյրով ու սիրմայով կոմպլիմէնտներ:

Եւ մենք բոլորս գոհ ենք այս անընդհատ գիմակահանդէսից. բայց տօների ժամանակ գիմակ ենք ծածկում, որ հաւատացնենք մեզ, թէ տարուայ միւս ժամանակներին մենք բաց երեսով ենք ման գալիս: Մենք գիշերները գնում ենք թատրօն, որ մեզ հաւատացնենք, թէ օրուայ մնացած ժամանակը իսկական կեանքով ենք ապրում և չենք ներկայացնում լուրջ կամ ծագրական կօմիդիա: Մենք գետեղում ենք լրագրների մէջ բառախաղեր ու հանելուկներ, որ մեզ համոզենք, թէ մնացած բաները պարզ ու հասարակ են աղբիւրի ջրի պէս: Մինչդեռ մեր կեանքը անընդհատ գիմակահանդէս է, յաւիտենական կատակերգութիւն, հանելուկ, որի վճիռը խոստացվում է յաջորդ համարում, բայց երբէք լոյս չի տեսնում:

Ահա թէ ինչու մեր շրջապատող օդը թւում է մեզ ստութեան մթնոլորդ, իսկ խմած ջուրը՝

խարէութեան ովկիանոս:

Այս ապականված մթնոլորդի մէջ ծնված և սնված, այս պղտոր ջրի մէջ մեծացած մենք մեզ խարում ենք և դադարում ենք ճշմարտութիւնը կեղծիքից ջոկել, աղնիւն անաղնիւից գանաղանել, արդարն անարդարից տարբերել և շարունակ մենք մեզ հակասելով ապրելով ճշմարտութիւնն ու արդարութիւնը յանձնում ենք տաճարներին պահելու, ուր երբէք չենք այցելում և որի վերաբերմամբ մեր պաշտամունքը գատարկ և անօգուտ խօսքեր են միայն:



Գ Լ Ո Ւ Խ Ձ.

Մ Ա Ր Մ Ն Ի Կ Ե Ղ Ծ Ա Ռ Ո Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մի գերմանացի բժիշկ տարիներ առաջ յանդգնութիւն ունեցաւ գրել չափազանց համարձակ մի գիրք, ուր, ի միջի այլ նոր խնդիրների, խորհուրդ էր տալիս մարդկանց ու կանանց բոլորովին մերկ մանգալ. իհարկէ, այդ պիտի կատարվէր միայն ամառը: Այս յեղափոխութիւնը, հեղինակի կարծիքով, շատ օգուտներ պիտի բերէր. նախ՝ արևի ճառագայթները անմիջապէս անցնելով մեր կաշու միջից, դիմացկուն կդարձնէին մեր մարմինը վատ եղանակների համար և որք կհարստանար արիւնով ու կեանքով: Մարմնի անդամները ամեն տեսակ կապերից ու հանգոյցներից ազատ՝ կարող էին ազատ շարժվել որով թէ կամրանային և թէ ահագին բարերար ազդեցութիւն կունենային առողջութեան վրա: Բայց այդ բոլորը չէ. կանայք և տղամարդիկ հանդէս կըդնէին իրանց մարմնական պակասութիւնները, որոնց այժմ այնքան ճարպիկ կերպով կարողանում են ծածկել դերձակները, կօշկակարները ու կուրսեա

շինողները: Եւ եթէ մէկը կամենար ամուսնանալ, այն ժամանակ այլ ևս չէին սխալվիլ ապրանքի ընտրութեան մէջ, որ ամուսնական պայմաններից մինն է կազմում:

Իհարկէ, ոչ որի մտքից չի անցկենում հետևիլ գերմանացի բժշկի համարաձակ խորհուրդներին. ամօթխածութիւնը շատ զօրեղ է մեղանում. սա կազմում է մարդկային յառաջադիմութեան և պատմական զարգացման պտուղը. իսկ այդպիսի բաները զրքերով չեն ոչնչանում. միւս կողմից, իրանց պակասութիւնները ծածկել ուղղուների թիւրն անքան շատ է, որ դերձակներն ու դերձակուհիները պիտի վախենային իրանց ապագայից: Մարդ և կին պիտի հագնվեն. Ես իմ կողմից չէի ցանկանալ, որ մարդիկ մերկ ման գային, բայց ես կցանկանայի նրանց զարդարանքերի մէջ աւելի քիչ կեղծիք տեսնել:

Ներկերով առողջութիւնը վնասելու մասին ես շատ եմ գրել, չափազանց նեղ հագուստներով կուրծքն ու ոտները այլասեռելու մասին այնքան եմ բողոքել, որ աւելորդ եմ համարում այստեղ նորից կրկնել, բայց չեմ կարող լռել այն բարոյական վնասների մասին, որ կեղծիքները հասցընում են մարդկային արժանապատուութեան:

Օրինակի համար վերցնենք այն տիկնանքից

մէկը, որին հանդիպում ենք այդում զբօսնելիս, կամ տեսնում ենք թատրօնական լօժայում իր ամբողջ գեղեցկութեամբ փայլելիս. նա մեզ կարող երևալ.

1. Մազերը ներկած սև կամ օսկեգոյն:
2. Յօնքերը բնականից թաւ և սև:
3. Աչքերը սիւրմա քաշած:
4. Զրթունքները կարմիր ներկած:
5. Ատամները արուեստական:
6. Դէմքը սպիտակացրած պուրբայով կամ արուեստական վարդի գոյն տուած:
7. Կուրծքը բնականից բարձր և պինդ կոճկած:
8. Ոտները բնականից փոքր:
9. Եղունգները բնականից աւելի կարմիր:
10. Կոճիւղները դեղերով յարդարած...

Ես գեւ բոլորը չեմ հաշել: Երբ տեսնում եմ այսպիսի կենդանի կեղծիք, զգում եմ զզվանքի, խղճահարութեան և նուաստանալու զգացմունք:

Ես զշշտեմ եմ զգում, որովհետև երևակայում եմ թէ ինչպէս այդ ներկված արարածը պիտի սևով, սպիտակով և կարմրով կեղտոտի իր երեսային կամ ամուսնուն, եթէ կամենայ փաղաքշել նրանց: Խղճահարութեան՝ որովհետև մտածում եմ

այն զարդարանքի ու տանջանքների մասին, որ կրած պիտի լինի, որպէս զի հրաշագեղութիւնը որքան կարելի է յաջող դուրս գայ: Նուաստացում որովհետև ես ամաչում եմ Քրիստոսի անունով միացած այն եղբայրների ու քոյրերի փոխարէն, որոնք չխանարհակելով ժամանակի անողոր կամքին, իրանց ամբողջ մարմինը դարձնում են յագեցած ստութիւն:

Այս մարդիկն ճամ են ուզում խաբել: Գուցէ իրանց մութ գահլիճների կէս խաւարի, եկեղեցու ստուերի մէջ, կէս լուսաւորված փողոցներում կյաջողի նրանց մի րուպէ դրաւել անվարձներին, կամ սխալեցնել անմեղին, բայց ի՞նչ նախատալից կլինի հիասթափումը:

Օ, եթէ լաքած տղամարդիկ և ներկված կանայք կարողանային լսել գոնէ մէկը այն բազմամաթիւ բացականչութիւններից, որոնցով այդպիսիներին ընդունում և ճանապարհ են գնում փողոցներում, հրապարակներում, գահլիճներում, երբ նրանք երևում են իրանց ֆիզիքական կեղծաւորութեամբ՝ —

Մա ի՞նչպէս լաք ներկված է. ի՞նչ գեղեցիկ երեսն է. նրան երեսն աժան չի նստել այն նշարհութեանը. օ, օ, հասարակաց պօլիստրո* է. վա՛հ, հասա սպիտակացրել է իրան հա՛, տեսե՛ք ինչպէս սլաշէ Բախլում է

և այլն և այլն:

Յայտնի է նոյնպէս, որ մարդկանց չարա-
խօսութիւնը, սուտը կշռադատելու համար միշտ
աւելացնում է թէ չափի և թէ կշռի մէջ. եթէ տը-
գամսրդը աշխատում է յիսուն տարեկան հասա-
կում ծածկել իր սպիտակ մազերը, նրա բարեհո-
գի բարեկամները իսկոյն տալիս են նրան վաթ-
սուն տարիք, մինչդեռ եթէ անկեղծ կերպով բո-
ւորին ցոյց տար իր սպիտակ մազերը, ոչ ոքի
մտքով չէր անցնիլ իզուր տեղը շնորհել նրան էլի
մի տաս տարի:

Բայց վատ ֆիզիքական կեղծաւորութիւնն այն
չէ, որ աշխատում է ծածկել հասակի և բնութեան
շնորհած պակասութիւնները, ամենավտանգաւոր
սուտն այն չէ, որ կատարվում է փառասիրութեան
շնորհիւ, կայ ուրիշ տեւիլ ցած կեղծիք. որ մայ-
րերը սովորեցնում են իրանց աղջիկներին, իսկ
գերձակներն ու գերձակուհիները՝ ամենքին, որպէս
զի գրգռեն նրանց ցանկութիւնը, սովորեցնում են
յանցապործութեան բոլորը ծածկելով կեղծ ամօ-
թի հաստ կեղևով և աւելի կեղծ համեստութիւ-
նով:

Մենք սովորեցնում ենք մեր աղջիկներին կար-
մբել սիրած մարդու հայեացքից. մենք նրանց ա-
սում ենք, որ իրանց ոտները շրջապատի սուտե-

րի մէջ պահեն և չմերկացնեն բաղմութեան հե-
տաքրքիր աչքերի առաջ մարմնի մի չնչին մասն
անգամ: Բայց այս բոլորից յետոյ մենք խնդրում
ենք կորսեա շինողին, որ պատրաստի աչքի վար-
կող կուրծք, իսկ գերձակուհիներին՝ որ նրանց
մատաղ մարմնին այնպիսի ձև տան, որպիսին բը-
նութիւնը տալիս է հոտտենտօսների կանանց:

Ի՞նչպէս էք կամենում, որ խօսքի և գործի
մէջ այսպիսի հակասութեան ժամանակ — կեղծ հա-
մեստութեան և համարձակ ազատութեան մէջ —
անձեռնմխելի և անարատ մնայ անմեղութեան
սուրբ շուշանը:

Ո՞ր օրէնքին պիտի հնազանդվեն մեր աղջիկ-
ները. գրքերում գրված բարոյականութեան, թէ
նորաձեւութիւնների կանոններին, որ տալիս են
գերձակներն ու գերձակուհիները:

Պէտք է նրանք ծածկեն իրանց ոտները շըր-
ջապատի տակ և յետոյ վարձատրեն իրանց գրա
փոխարէն բաց ուտերով ու թիկունքով: Պէտք է
նրանք ոտներով արտայայտեն համեստութիւն,
իսկ կեղծ կրծքով ցանկութիւն գրգռեն:

Եթէ այսպիսի պայծառ կեղծաւորութեան
գպրոցում դարձեալ բոլոր աղջիկները չեն փայլում
իրանց կոկետութիւնով և կեղծիքով, այդ նրա
համար, որ նրանց մէջ կան թանկագին բնաւո-

րութիւններ, որոնց չեն կարողանում մօտենալ կեղծիքն ու յանցանքը: Բայց մեծամասնութիւնը ներշնչելով իրանց շրջապատող ընդհանուր կեղծաւորութեան վատ օդը, սկսում է խաբել կեղծ ձևերով, յետոյ, յետոյ սովորում է ստել կեղծ ժրպիտով, կեղծ սիրով, ամենօրեայ յանցանքներով և այս բոլորը կատարում է փափուկ և խոնարհ համեստութեան ծածկացի տակ թաքնված:

Սիրող մայրեր, իմաստուն դաստիարակներ, յարգեցէք ընտթիւնը, որ երկար ժամանակ խընամքով պահպանում է այն փակված կոկոնը, որ կամայ կամաց բացվելով ի վերջոյ դառնում է փթթած վարդ:

Բնութիւնը, որ առաքինութեան գլխաւոր դաստիարակը պիտի լինէր, տալիս է մեր աղջիկներին որոշ տարիների ընթացքում միայն մանկական ձև, բանի որ նրանք հոգւով երեսաներ են. յետոյ հեղհետէ սկսում է իր մտգական մատիտով հրեշտակային մարմնի վրա դժագրել և մանկանը տալ կանացի արտայայտութիւն, իսկ կնոջը՝ հրեշտակի կերպարանք:

Իսկ դուք, տգէտ և անբարոյական մայրեր, ցանկանում էք ծածկել այդ կոկոնը, դուք ծագրածուի զարգարանք էք փաթաթում կուսական մարմնին և անմեղութեան սուրբ ու մաքուր ծա-

ղիկը դարձնում էք զրգուիչ և արբեցուցիչ հոտերի մի խառնուրդ: Եւ յետոյ դուք զարմանում էք, երբ ձեր զօրով բացարած ծաղիկը դառնում է դարշահոտ և վնասակար միջատների մի որս. այն ժամանակ ձեր վիշտը յայտնում էք կեղծ արտասուքով:

Երբ կեղծաւորութիւնը երկնային ցօղի հետ լցվում է այն ոսկեայ անօթի մէջ, որ կոչվում է անարատ աղջիկ, այն ժամանակ նա դուրս է թափւում ափերից, հեղեղում է սրտի բոլոր խորշերը, պատրաստում է կեղծ առաքինութիւն և յանցանքներ, որոնք թիւնաւորում են սէրը և քայքայում են ընտանիքն ու հասարակութիւնը:



Ք Ն Ո Ւ Թ Ե.

Ս Ր Տ Ի Կ Ե Ղ Ժ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մենք ծննդեան օրից այնքան ենք վարժվել կոմսլիմենտներ ասել ու լսել, մենք այնքան ենք վարժվել ամենքին արտայայտել յարգանք ու սէր, որ անընդունակ ենք դարձել իմանալու, թէ երբ են մարդիկ մեզ ծաղրելով գովում, և երբ են արտայայտում իսկական համակրութիւն:

Մեր գաստիարակութեան մեծագոյն մասը նըրանում է կայանում, որ մեզ սովորեցնում են թէ ինչպէս պիտի ծածկել մեր իսկական զգացմունքները և արտայայտել այն, ինչ որ չենք զգում: Այդ արվում է ոչ թէ չար մտադրութեամբ, ընդհակառակը, բարի նպատակով, այսինքն, որ վաստիարակներ քաղաքավարի մարդիկ և խոհուն կանայք: Այն ժամանակ, երբ կեանքում պատահողներից շատերը մեզ հետաքրքիր չեն, կամ նոյն իսկ զզվանք են յարուցանում, գաստիարակութիւնը այնուամենայնիւ հրամայում է մեզ ծածկել այդ զգացմունքը քաղաքավարութեան և մեծացրած սիրոյ դիմակի տակ: Այդ պատճառով էլ,

երբ մենք մի օրեւէ անձնաւորութեան իսկապէս յարգում ենք և համակրում, ստիպված ենք լինում դիմել արտակարգ գովասանական միջոցների, եթէ դրանք արդէն չեն ծախսվել ամենօրեայ քաղաքավարութեան և դատարկ սէր արտայայտելու վրա:

Օ՛, եթէ ես գոնէ կէս ժամ լինէի միահեծան բռնակալ, ես, ի միջի այլ օրէնքների, որոնք երբէր պարլամենտներում*) չեն քէտարկվում, կը մտցնէի և հետևեալը.

Անէղծութեան Լագուարու-Լեան Բուրք երէրներում Տեանգամայն արգելքում է գերադրանքն աստիճանի գործածութեանը, որովհետև դա համապատասխանում է Տեայն վայրէջքներին և Տանդան չաղանգըրութեան:

Խօսակցութեան ամեն մի գերադրանքն աստիճանի գործածութեանը պարտաւորում է որովհետև աշխատանքով:

Անհատաբար ի գոյնասանելու և Բուրք ուրեշ շարժարկ խօսակցը հասարակացը են սպանութեան, այդ պարտաւորութեան էն Տանդը կամ յմահ Բունարդութեամբ:

Քայց գերադրական աստիճանի ի չարը գործ դնելը չի սահմանափակվում միան սովորական խօսակցութեամբ այլ խորը թափանցում է մարդկանց ընթացեան մէջ, ծնվում է բարեկամական բոլոր յարաբերութիւնների, ամեն տեսակ քննընթացութիւն արտայայտելու և հաստարակական ամեն-

նատեսակ կապերի մէջ:

Այստեղից են առաջ գալիս այն բոլոր ցմահ սիրելիութեան երգումն, բարեկամ մնալու խոստումն, ինքնամոռացութեան և անձնուրացութեան բարձր գաղափարները, հերոսութեան մասին բարձր օրհներգութիւնները, որոնք բարձրանում են դէպի երկինք ամեն մի խրճիթից, ամեն մի պալատից, ընտանեկան շրջանից, ուր կազմակերպուած են մարդիկ, մինչև պարլամենտական դահլիճները, որտեղից կառավարում են մարդկան: Եթէ բառերին հաւատանք, չկայ այն իդէալը, որ մարդուն կարողանայ լիուրի բաւականութիւն տալ. չկայ այն թուիչքը, որին հասնելը մարդ անընդունակ համարէր իրան. բայց իսկապէս երևում է, որ չկայ այն վարմունքը, մինչև ուր նա իջած չլինի. չկայ այն ցածութիւնը, մինչև ուր նա ստորացած չլինի, միայն եթէ կարողանար *sauver les apparences* (պահել արտաքին արժանիքը) և պահել անբիծ այն անմահ Պաշտօնը*), որ պահում ենք հին կեղծաւորութեան սրբարանում:

Ես խոշոր հակասութիւն եմ գտնում մեր իսկական արժանիքի և այն բանի մէջ, որ ուզում ենք ցոյց տալ: Մարդիկ նման են այն արարածներին, որոնք գատապարտուած են ընդ միշտ օտերի վրա լինել, բայց փառասիրութիւնից կըս-

ցրել են թղթէ թեր. կամ համեմատել գաճաճների հետ, որոնք ման են գալիս իրանց կոմպլիմէնտների և կեղծաւորութեան ոտների վրա:

Ես չեմ հերքում, որ այս բոլորի մէջ կայ բարի ցանկութիւնների սաղմը—դէպի առաջ գընալու անգիտակցական ձգտումն, լաւանալու, նիրհող ամբոխից բարձրանալու ցանկութիւնն և հէնց դրա համար էլ առում են. կեղծաւորել նշանակում է առաքլիւթեան առաջ խոնարհվել:

Ընդունենք թէ այդպէս է. բայց երբ այդ խոնարհվելը դարերի ընթացքում մնում է անօգուտ, պլատոնական, երբ մենք խոնարհվում ենք մեզնից հեռու գտնված և անտեսանելի Աստծուն, առանց մի քայլ մօտենալու Նրան, ապա՝ ակամայ ինքս ինձ հարց եմ տալիս. աւելի լաւ, խելացի, բարոյական, արժանի չէր լինիլ, եթէ իդէալ Աստծուն փոքր ինչ դէպի մեզ իջեցնէինք, որ օտի մատերի վրա կանգնելով, կամ ձեռքներս բարձրացնելով յուսալինք թէ կկարողանանք հասնել Նրան:

Փոխանակ ցանկանալու, որ լինենք հերոսներ, նահատակներ, հրեշտակներ, լաւ չէր լինի բաւականանայինք նրանով, որ լինէինք ազնիւ մարդիկ, բայց իսկապէս անչեղ ազնիւներ մեր անձնական և հասարակական պարտաւորութիւնները

կատարելու ժամանակ թէ տանը, թէ եկեղեցում, թէ ծանօթների շրջանում և թէ պարլամենտներում:

Ասում են Գասկոնիան*) յատկապէս պարծենկոտների երկիր է: Մի ֆրանսիացի ասել է. Ֆրանսիան Եւրոպայի Գասկոնիան է: Ես մի քայլ էլ հեռու կգնամ որոշումների աշխարհագրական սահմանները ընդարձակելով կասեմ. Եւրոպան, աշխարհի ամեն կողմ ցրված իր քաղաքակիրթ գաղութներով, է մեր մոլորակի Գասկոնիան, բոլոր պարծենկոտների և Գծնքիչօտների երկրային գրախտը:

Իտալական պատժական նոր օրէնսդրութեամ խելացի կերպով ջնջած է երգմնազանցութեան պատիժը: Պահելով այն, մենք որպէս զի յաջորդական լինէինք, պիտի մարդկային ամբողջ հասարակութիւնը պատժի ենթարկէինք: Ո՞վ մեղանից երգմնազանց չի եղել մի առարկայի կամ մի անձնաւորութեան վերաբերմամբ: Ի հարկէ մենք վերջենք բարձրացրել աջ ձեռքի երեք մատը և չենք գրել ձախ ձեռքներս Աւետարանի սուրբ հատորի վրա, երբ առաջին անգամ մեր սիրած էակին երգվում էինք ցմահ հաւատարմութիւն, կամ երբ երգվում էինք մի որևէ սկզբունքի և բարձր նըպատակի համար: Բայց ժամանակի ընթացքում այն

աստղը, որի տակ երգվել ենք, անցնում ծածկվում է անդարձ անցեալի մթութեան մէջ. ծագում է նոր արև, որով նոր երգում ենք անում և այդ արևը իւր հերթին նոյն մթութեան մէջ է մտնում և երգումներն ու երգմնազանցութիւնները յաջորդում են իրար այնպէս, ինչպէս օր ու գիշեր իրար են յաջորդում և մենք սովորում ենք այս տատանումներին առանց ծովային հիւանդութիւն ստանալու, առանց սիրտ խառնելու:

Մենք, քաղաքակիրթված բրիտոնեաներս պիտի հնազանդվենք աւնուաղն երեք օրէնքի, մինչգեռ միայն մէկը պիտի ունենայինք մի դէպքի համար: Այդ պատճառով էլ գրված օրէնքը շատ ողորմելի է, որովհետև երեք օրէնքները ոչ թէ անհամապատասխան են իրար, այլ ուղղակի մէկը միւսին հակասում է:

Այսպէս. Աւետարանում գրված է. եթէ մէկը քո երեսին ապտակ իջեցնի, դու պիտի դարձնես միւս երեսդ էլ: (Որպէս զի համաշափութեան օրէնքը չխախտվի):

Քրէական օրէնքում գրված է. եթէ մէկը քեզ խփի, դու պարտական ես վիրաւորանքի համար գանգատվել և օրէնքը կպատժի նրան:

Հասարակական կարծիքի օրէնքում, որ աւելի զօրեղ է քան նախընթացները, թէև և ոչ մի տեղ

չի տպագրուած և չի էլ գրուած, ասուած է. եթէ դու ստացար մի աստակ, պարտական ես միջնորդներ (սեկունդանտ) ուղարկել վիրաւորողիդ մօտ, կուել մենամարտի մէջ և նայելով բազդի բերմունքին սպանել կամ սպանիլ:

Այս երեք օրէնքներից որին պիտի հնազանդվենք բարոյական մարդ լինելու համար: Այս երեք օրէնքներից որին պիտի հետևես դու, որ քեզ համարես ու մնաս ազնիւ մարդ:

Աստու օրէնքում գրուած է. ուրիշի կնոջը ցանկանալու մտքով մտիկ տալն իսկ մահացու յանցանք է:

Քաղաքական օրէնքում գրուած է. ամուսնական անհաւատարմութիւնը պատժուած է խիստ օրէնքով:

Հասարակական կարծիքի օրէնքն այդ անհաւատարմութիւնը պատժում է հանաքով կամ կոմպլիմէնտներով և ոչ որ չի գրկում անառակ կնոջը և մարդուն յարգանքից:

Այս երեք օրէնքներից որին պիտի հետևես ես: Այսպիսի փափուկ խնդիրներում ինչն զատողութիւնների այս տեսակ հակասութիւն կայ:

Ինչն:

Որովհետև մենք պատկանում ենք երկոտանի պարծենկոտների գառակարգին. ման ենք գալիս

փայտէ ոտներով և կրում ենք թղթէ թեկեր. իսկ կեանքի քեմի վրա ման ենք գալիս իբրև հսկաներ, հրեշտակներ, հերոսներ փայտէ օտերով, թղթէ թեկերով, պսպղուն կեղծ զէնքերով: Որովհետև մենք, մեծից մինչև փոքրերը, դերասաններ ենք: Լիննէյի գասակարգութիւնը լրացնելու համար աւելացնենք

Մարդը յարուստ է ծաղրան կենդանի է:

Երբ մենք ծիծաղում ենք կտպիկի ծամածրուութիւնների վրա, դրանով անգլխակցաբար ծիծաղում ենք մեզ վրա, որովհետև մենք հազար անգամ ծիծաղելի ենք նրանցից: Օրը տասն անգամ կնճուում ենք մեր բարձրահայեաց ճակատը մտածելով ճշմարտութեան և բարւոյ յաւիտենական սկզբունքների մասին: Մենք դժգոհ ենք այս անընդհատ կատակերգութիւններից, որոնցով մեզ դատապարտել ենք նրա համար, որ ձեանանք Ագամենոն*) կամ Արիլէս*) թղթէ սաղաւարտով, փայտէ թեկերով, արճճէ թագերով և ծաղրական պայթուցիկներով:

Մինչև անգամ յուշարձանացաւը, որ մեր դարը զարձրել է քանդակագործների և հանդիսաւոր ճառերի դար—է սրտի կեղծաւորութեան մի ձևը:

Մեծ մարդկանց դափնիները չեն թողնում մեզ հանգիստ քնանալ, քանի իբանք կենդանի

են և միջոց չենք խնայում նրանց մէջ ցոյց տալ պակասութիւններ, թէկուզ խոշորացոյցի կամ հեռագրտակի միջոցով. բայց հէնց մեռան թէ չէ, մենք պարտք ենք համարում ողբալ նրանց մահը մեր արժանապատուութեան օգտին:

Քանի մեծ մարդիկը կենդանի են, նրանք ենթարկվում են ժամանակակից արդարագատութեան դատատանին, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թայֆայական քննադատութիւն, որ ճանճից փիղ է շինում և անտեսանելի կէտից մի խոշոր բիծ, որ կարող է արևը ծածկել:

Ամեն մի ողորմելի իրաւունք է համարում նրանց մերկացնել ամբոխի առաջ, մտնել նրանց ամեն մի կնճիռի մէջ, չափել նրանց ամեն մի մազը:

Բայց հէնց գերեզմանի քարը ծածկեց նրանց յաւիտեան, նախանձոտ միջախութիւնը չի կարողանում ամենամեծ գովեստներ գտնել նրանց երկինք հանելու:

Ձեր հայեացքը հանգաւ, նրա լոյսն էլ ոչ որի չի կուրացնի. ձեր բուռնցքը մեռած է, այսուհետև ոչ որի չի կանգնեցնի. ձեր ձայնը լուկ է, չի կարող վախեցնել ոչ բուերին և ոչ չղջիկներին: Հէնց դուք մեռաք թէ չէ, ձեր մեծութիւնը գաւնում է ամենքի սեփահականութիւն և բոլո-

րը սիրով հետևում են ձեր փառքին:

Եւ ձեր ժառանգները ողբալով ձեզ վրա և մոռանալով նախկին նախանձը, դառն վէճերն ու հաշիւները ժամանակակից առատաձեռնութեան և ոգևորութեան մէջ ձեզ համար մարմարէ կամ բրօնզէ արձան կամ կիսարձան են կանգնեցնում, որ ապագայ սենրդին պիտի ասի. տեսէք, ինչպէս մեր ժամանակը կարողացել է գնահատել և յարգել մեծ մարդկանց:

Ո՛վ սուրբ, քաղցր և երբէք արժանավայել կերպով չգովաբանված մարդկային կեղծաւորութիւն, դու յաճախ և սիրով խաբում ես, դու խաբում ես քաղաքավարի և քնքոյշ կերպով, բայց քո բոլոր սուտը գոլորշու պէս թեթեւ է, դու խաբում ես նրա հետ, ինչպէս երեսան սապոնի դրնտակները հետ: Բայց երբ գալիս է արդարագատութեան հանդիսաւոր րօպէն, դու թողնում ես դատարկ խօսքերը և քանդակում ես մարմարից, կամ ձուլում ես բրօնզից քո անմահ պատասխանները. դու խկոյն յղկում ես մեծ ու փոքր գարուփոսերը, որոնցով տանջվում էր *Հեռուստան*, խկ խեղճ *Կիսկան*, որ անընդունակ է մի որևէ ուրախութիւն զգալու, դու առատաձեռն շռայլում ես յարգանք ու փառք:

Օ՛, քաղցր, սուրբ կեղծաւորութիւն, դու վարժ

ձեռքով ընտանեկան օջաղում դաւաճանութեան
փշերը հիւսում ես սիրոյ ծաղկած վարդենու հետ,
դու ստիպում ես քաղաքի փողոցներում թեւե-
րուկ պտտել շարախօսութիւնն ու բարեկամու-
թիւնը, նախանձն ու երկրպագութիւնը: Աստծու
տաճարում, խորհրդաւորութեան խորանի առաջ
մօտեցնում ես իրար մանկական հետաքրքրութիւ-
նը, կանաչի փառասիրութիւնն և կռապաշտական
ծամածութիւնները և լիառատ ամենօրեայ ու-
րախութիւններ պարգեւելով կենդանիներին, դու
չես մոռանում մեռածներին, որոնց միայն դու
կարող ես վարձատրել նրանց մերձաւորների ան-
արդարութեան փոխարէն:

Եղի՞ր դու հարիւր և հազար անգամ օրհնեալ,
դու, մեր քաղաքակրթութեան անդրանիկ և սի-
րելի դաւակ կեղծաւորութիւն:



Ք Ա Ո Ւ Խ Ը .

Մ Տ Զ Ի Կ Ե Ղ Ծ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մտքի կեղծաւորութիւնը զգացմունքի—սրտի
կեղծաւորութիւնից բաժանելը շատ դժուար խըն-
դիր է. որ սլահանջում է ամեն բան բանդող վեր-
լուծութեան լարված աշխատանք, որովհետեւ այս
երկու տարրերը—միտքն և զգացմունքն—այնպէս
հիւսվում և միանում են իրար հետ, որ ոչ ոք
երբէք չի կարող գտնել զգացմունք, որ կապ չու-
նենայ մտածողութեան հետ և միտք, որ ուղղակի
կամ կողմնակի յարաբերութիւն չունենայ սրտի հետ:

Այս ժողովրդական գրքոյկի մէջ, իհարկէ, ես
չեմ կարող զբաղվել գիտնական հոգեբանութեամբ
կամ զուտ մտքի քննադատական կանոնաւոր վեր-
լուծութեամբ. սիրելի ընթերցողին բաւական է
իմանալ, որ եթէ ես բաժանում եմ հոգու կեղ-
ծաւորութիւնից, նրա համար միայն, որ հեշտ
լինի նման իրերի զուգորվելը և տարբեր բանե-
րի բաժանելը:

Կայ մտքի կօկետութիւն—նազկլթելը, ինչպէս
որ գոյութիւն ունի զուգվելու կօկետութիւն և

մենք օգտուում ենք դրանով այնպիսի ճարպկութեամբ, որ հասցնում ենք կատարեալ սքանչացման և կարողանում ենք մոլորեցնել և գրաւել ճշմարտութեան ամենամոլեռանդ երկրպագուին:

Տեսականի—Թէօրիայի մէջ այն բոլորը, ինչ որ ճշմարտութիւն չէ, ստուծիւն է. բայց գործնական կեանքի մէջ գոյութիւն ունի մի տեսակ կէս ստուծիւն, որ բնականաբար լինելու է և կէս—ճշմարտութիւն: Բացի ճշմարտութեան այս հերձաքօրէնէրէ*), մենք ունինք էլի անվերջ դասակարգութիւն, բազմութիւն գանազան ձեւակերպութիւններ, ուր ճշմարտան ու սուտը միանում են իրար հետ գանազանակերպ անհամար չափերով. բացի այդ, կայ ճշմարտութիւն, որ ծածկված է ստուծեան դիմակով և սուտ, որ հագած է ճշմարտութեան հագուստ:

Այս քիմիական միաւորութիւնը, այս ծածկը վերը թէև կարող էր կատարվել բնական կերպով, ակամայից, բայց այդ բանին սովորեցնում են և դպրոցներում արուեստական կերպով. այնտեղ կեղծ փրիսոփայութիւնը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ մտքի իմացականութեան ձեռնածութեան աչքակապութիւն, մեզ մտածողութիւն սովորեցնելու պատրուակով սովորեցնում է սխալը գտնել տրամաբանութեան հին ասքօրէյ վերցրած շատ «Լիւն»

վերջաւորութեամբ դիտութիւններով:

Հազիւ թէ գատողութիւնը, միտքը—անցնելով այն անվիճելի օրէնքների և ֆրիլըրական փրիսոփայութիւնների գլանները ու օգակների միջով, որոնք աւանդվում են մեր դպրոցներում—պահպանի իր առողջութիւնը: Իսկ երբ մի անգամ առողջ գատողութիւնը կորցրեց իր ճանաչաւարհը հեշտութեամբ չի գտնում:

Մեր հասարակութիւնը յարգում է մի պարագույնը, որ կարծես ստեղծված է նրա համար, որ մեզ կատարելագործի մտքի փշայած և ապականված կեղծաւարութեան մէջ. դա փաստաբանութիւնն է:

Ապացուցանել մեղադրեալի անմեղութիւնը—դա փաստաբանի իգէալն է. որքան ծանր է յանցագործութիւնը, որքան ապացուցութիւնները համոզիչ են, այնքան աւելի է լարվում պաշտպանի միտքը, որ ապացուցանի թէ մեղադրեալը մարմնացած արգարութիւն է: Ասացէք խնդրեմ, տրամաբանութեան այսպիսի մարմնամարդութեամբ մի բանի տարուց ինչի կփոխվի մարդկային ուղեղը: Ասացէք, ինչպէս կարող է հասարակութեան մէջ ամբանալ ճշմարտութեան և հասկացողութիւնը, երբ տեսնում է նա ու լսում երկու հակառակ կողմի փաստաբաններին, որոնք «Լիւն»

մարտի մէջ կուում են, կուվում են հակաճառու-
թեամբ և կեղծաւորութեամբ:

Իսկ փաստաբաններ շատ կան. այդ պարապ-
մունքը համարվում է հասարակական պարտաւո-
րութիւն, բարձր—մարդասիրական գործ՝ պաշտ-
պանել նոյն իսկ մարդասպանին, նոյն իսկ հայրե-
նիքի դաւաճանին, նոյն իսկ ոճրագործին, որ իր
ոճիրը խոստովանել է: Այսքան մենք եռանդուն
և բարեհոգի պաշտպաններ ենք ճշմարտութեան:

Ներկայումս փաստաբանները պատկանում են
մեր հասարակական կազմակերպութեան ամենա-
զօրեղ քաղաքացիների դասակարգին, որովհետև
մի կողմից ձեռքնեքին ունեն բանտի և տաժանա-
կիր աշխատանքների դռների բանալին, միւս կող-
մից կարգադրում են մարդկանց բազդն ու պա-
տիւը, երբ խնդիրը քաղաքական գործերին է
վերաբերում: Բայց այդ դեռ բոլորը չէ. ճարտա-
սանութեան և մտքի ճարպիկ մարմնամարդութեան
մէջ շարունակ վարժվելով դառնում են զարմանա-
լի ճարպիկ լողորդներ քաղաքական մեծ ծովի
խութերի մէջ, մանաւանդ այժմ, երբ խօսքը պե-
տական և պարլամենտական գործիչների գլխաւոր
չէնքն է:

Նւ փաստաբանները կաճին ու կբազմանան
մորեխի պէս, մինչև չգայ նոր ժամանակ, որ թե-

թեանցնի մեր հասարակական մեքենայի կազմա-
կերպութիւնը:

Բայց մտքի կեղծաւորութիւնը ձեռք չի բեր-
վում միայն շեշէ նստաբանների վրա, չի դասա-
խօսվում միայն փիլիսոփայութեան ամբիօնից և
չի գործադրվում միայն փաստաբանների ձեռքով:
Փիլիսոփաները, Բեռնարդինները*), փաստաբաննե-
րը միայն, այսպէս ասած, այդ գործում հասնա-
գէնք են. բայց կեղծաւորութիւնը թագաւորում
է բոլոր դպրոցներում. նա դասախօսվում է ինչ-
պէս տարրական, նոյնպէս և բարձրագոյն դպրոց-
ներում, ուստի նա ժամանակակից ժողովրդի ման-
կավաժութեան մէջ է ծծված:

Ժամանակակից հասարակութիւնը—89 թեա-
կանի և գիտութեան դաւակը—ազատվելով այն-
քան դարերի ամօթալի և ցած ստրկութեան կաշ-
կանդումներից, սիրեց իր ազատարարին և բար-
ձրացրեց նրան գահի և սրբութեան սեղանի վրա,
ցոյց տալով նրան աշխարհային և կրօնական յար-
գանքներ: Անա թէ ինչու մարդկային մտքի այդ
առաւելութիւնը ամենից շատ է աչքի ընկնում
մեր դարի գծերի մէջ:

Իհարկէ, մենք այլևս ֆրանսիական յեղափո-
խութեան մտքի Աստուածունուն չենք պաշտում
մեր նախնիքների նման մերկ ու կոպիտ ձևով,

բայց մենք նրան մտցրել ենք ամեն մի զպրօց և նա ներկայ է լինում այնտեղ անտեսանելի և ամենակարող, ինչպէս ինքն Աստուածը: Եւ մենք յօգուտ նրա զոհում ենք մեր սրտի միւս բոլոր յատկութիւնները, բոլոր զզայմունքները և հոգու բոլոր շարժումները:

Գիտութիւնը պարունակում է կարողանալը, ցանկանալը, բազդաւորութիւն և հարստութիւն. նա ծառայում է իբրև միակ և իսկական շափ մարդկային բոլոր արժանաւորութեանց: Եւ անհմենք տեսնում ենք ինչպէս մեր դպրոցներում կատարվում է տենդային աշխատանք սովորելու, ուսանելու և անգիր սերտելու համար, որովհետև այդ համարվում է Պրօֆէսէր* զաւակների միակ և գլխաւոր առաքելութիւնը, որոնք պիտի իրանց հօր վրէժը հանեն, որին պատառոտում և լափում էին անգղիները, որովհետև կամենում էր շատ բան իմանալ:

Եւ մեր մանկավարժական այս անդրանիկ յանցանքը մեզ դարձնում է ջղային և տալիս է մեզ ուրիշ յատկանիշ էլ — կեղծաւորութիւն:

Որովհետև անկարելի է ինչ որ գրքերում գրված է իմանալ, ուստի պիտի հաստատել նրանց կողմը, կարգալ վերնագիրը, անգիր սերտել հեղինակների անուն ազգանունները: Այն ժամանակ,

երբ գիտութիւնը իր անընդհատ կատարելագործութեամբ տալիս է անթիւ անհամար բաժանմունքներ ու ճիւղաւորութիւններ, գիտութեան հին լիճը դարձնելով վտակների, առունների, մեծ ու փոքր ջրանցքների մի ամբողջ լաբիրինտ, ժամանակակից կրթված մարդը պիտի անգիր պիտենայ այս դարմանալի ջրաբաշխական կարգի աշխարհադրական քարտէզը:

Մեր յետնորդները կտարսափեն երբ կժանութանան մեր միջին և բարձրագոյն դպրոցներում աւանդվող առարկաների ծրագրի հետ, այնպէս, ինչպէս մենք սարսափում ենք, երբ կարգում ենք հօգրոսէի հէրոսէրի մասին, միայն այն զանազանութեամբ, որ մեր ժառանգների սարսափը հարկը անգամ աւելի և օրինական կլինի մերինից:

Եթէ Ուլլիան ու Աքիլլէսը ճաշի ժամանակ ուտում էին մի ամբողջ եզ, մենք էլ, ժամանակակից յեղափոխութեան նորածին զաւակներս մտքի երկար ժամանակեայ սովից արիւնքամ ուղեղներ ունինք, որ լիքն են բառերով և անընդունակ են մարտելու այն, ինչ պատրաստել է մտքի համար տենդային և արագ դարգացող գիտութեան դարը:

Միտքն ու սիրտը կազմում են մարդկային աշխարհի երկու հաւասար կիսագնտերը: Բայց ասացէք խնդրեմ, այժմ մեր կրթութեան մէջ սիր-

տը հր մասն է գրաւում և զգացմունքը հր. կըր-
թութիւնն որքան առատ է անուաններով, թըւ-
նշաններով և որոշումներով, նոյնքան ազրատ է
զգացմունքով: Մենք ամեն բան անում ենք գի-
տութեան համար և ոչինչ չենք անում հոգու հա-
մար, որ բաղդաւորութեան գլխաւոր գործօնն է,
գործօնն է և՛ բարոյականութեան, և համարձակ
կարելի է ասել և՛ առաջադիմութեան:

Գուք յետ էք մղել գպրոցներում կրօնական գի-
տութիւնները, որովհետև ձեր նախորդների կրօնը
ձեզ երևում է հնայած, մտքին հակասող, շատ
բարի, ընդունենք: Բայց ինչ էք գրել նրա տեղը:
Ոչինչ, ոչինչ և ոչինչ:

Գուք սոված մարդու ճաշի սեղանի վրայից
վերցրէք բաժինը, որ ձեր կարծէքով դժուարա-
մարս էր, բայց դուք չմտածեցիք փոխարինել ա-
ւելի օգտակար և առողջարար կերակրով:

Չմարսվելուց վախենալով դուք գերադասե-
ցիք քաղցածութիւնը, մոռանալով, որ չմարսվե-
լուց մենք կարող ենք հիւանդանալ, բայց քաղցա-
ծութիւնից՝ մեռնել:

Մեր դարը աշխատում է լուել, թագցնել ի-
դէպի ծարաւը (սամելով Չօլայի*) և նրա հետևող-
ների գրականութեան իդէալիզմը և անբնական,
արտասուախառն ժպիտով յայտարարում է մեզ,

որ այլևս իդէալի որևէ ծարաւ չունի:

Բայց նա ստում է, խայտառակ կերպով ստում
է միլիօնաւոր մարդկանց բերանով բարձրաձայն
յայտարարելով թէ՛ գիտութիւնը ամեն բանի տե-
ղը բռնում է: Հէնց դրանով էլ նա — մեր դարը
արժանի է Տարտիւֆի ամօթալի կոչման:

Գոնէ այդ գիտութիւնը լինէր ճիշդ. առողջ
գիտութիւն, լինէր այն գիտութիւնը, որի համար
Արարիչը եղեմում դատապարտեց մեր նախածը-
նողներին և որը հասկացվում է մարդարէական
խօսքով. և ~~գուհի~~ ~~հիսնէ~~ ~~իբրև~~ ~~Աստուածներ~~ ~~Բարին~~ ~~և~~
~~չարն~~ ~~իմացող~~:

Բայց ոչ, հազար անգամ ոչ: Նոր գիտութիւ-
նը, որ աւանդվում է մեր գպրոցներում ուսուցիչ-
ների ձեռքով, այն ուսուցիչների, որոնք աւելի
տգէտ են քան աշակերանները, ներկայացնում է
խոհանոցի աւելցուկ հօտած նիւթերից պատրաս-
տած կերակուր, միայն աւելի թարմ համեմունքով
համեմած, որի սօուսը պատրաստված է բնու-
թեան ամեն տեսակ մասերից:

Մեր ժամանակակից գիտութիւնը, այսինքն
ուզում եմ ասել այն, որ աւանդվում է մեր դըպ-
րոցներում, հին համագիտութիւնն — էնցիկլօպե-
դիան է, յարմարեցրած ներկայ ժամանակին: Սա
հասարակ մարդկային վերարկու է գեղեցիկ և

փառահեղ իր պարզութեամբ, որը միայն ժամամանակակից դերձակների ձեռքում այլանդակվել է հազար ու մի դարդարանքներով և պատուար հազուատը փոխվել է ծաղրական շորի:

Ո՛վ դուք, նոր գիտութեան ներկայացուցիչներ, աշխատեցէք օժանդակել այն բանին, որ առողջապահութիւնը թափանցելով ամաններն ու կաթսաները, մտնի և այն ընդարձակ խոհանոցը, ուր պատրաստում են գրքերը, քննական ծրագիրները, քերականութիւններն ու բառարանները:

Այն ժամանակ, երբ մենք անհամբեր ըստասում ենք թարմացուցիչ բարեփոխութեան, մեր գպրոցները շարունակում են ծառայել իբրև մըշտական կեղծաւորութեան աղբիւրներ. կեղծաւորութեան, որ մտել է մտածողութեան բոլոր խաւրիի մէջ և կեղծել է նրա ամեն մի երևոյթը:

Խարում են վարժապետները, խարում են աշակերտները, խարում են քննութիւնները, խարում են դիպլոմները, որ վիայում են աշակերտների գիտութիւնը:

Խարում են վարժապետները, որովհետև ստիպված են աւանդել այնպիսի առարկաներ. որ իրանք լաւ չգիտեն:

Խարում են աշակերտները որովհետև ձեանում են գիտցող այն, ինչ չեն իմանում և փաթաթվե-

լով համագիտութեան հագուստի մէջ, որը կարկատած է հարիւրաւոր հատորներից առած կրտորներից:

Խափում են քննութիւնները, որովհետև այն ձևով, ինչպէս որ այժմ գայութիւն ունին, նրանք չափում են քննիչների ոչ թէ գիտութիւնը, այլ մտքի ճարպիկութիւնը, խորամանկութիւնն ու ճկունութիւնը:

Խարում են դիպլոմները, որովհետև գօկտորութեան աստիճան են տալիս շատ մարդկանց, որոնք գեռ նոր պիտի աշակերտէին. նրանք խաբում են, որովհետև տալիս են հասարակութեան այնպիսի մարդիկ, որոնք մնաստակար են իրանց գործնական գիտութեամբ, մարդիկ, որոնք անպատիժ կարող են կառուցանել բնակարան — գերեզման — շինել տուօղների համար, որոնք կարող են անպատիժ սպանել հիւանդներին և ոչնչացնել ամենաիրաւացի բաները:


Անգրագէտ վայրենին, ոչ մի դիպլոմ չունենալով կարողանում է որսալ ձուկն, կարողանում է խրճիթ շինել, որ տակով չի անում շինողին — չի քանդվում, պատրաստում է նաւակ, որ չի ընկղմում ծովի մէջ:

Մեր ժամանակակից գօկտորները մարդկանց ֆրագմենտներն են. որպէսզի միանգամայն անօ-

գուտ չապրեն թէ հասարակութեան և թէ իրանց համար, ստիպված են ամեն օր ծածկել իրանց կոպիտ տգիտութիւնը և գուռզանալ այն փայլուն ներկով, որով ծածկում են իրանց պակասութիւնները և այսպիսով կարողանում են մըտնել մեր հասարակական մտայնիկայի մէջ իբրև փոքրիկ ֆրագմենտներ:

Չատ դժուար կլինէր մեր քաղաքակրթված մարդկանց համար, եթէ նրանք ստիպված լինէին ապրել ամառի կղզու վրա:

Կէղծուոր բարձր գաւազները կարող են ապրել միայն այն կեղծ շրջանում, ուր ծնվել են, նման բորբոսների, որոնք լաւ են զարգանում խոնաւ և մութ մառաններում:



Ք Լ Ո Ւ Թ Թ.

ՀԱՍՏԲԱՆԿԱՆ ՄԵԾ ԿԵՂԾԱՆՈՐՈՒԹԻՒՆ

Մարդկային կեղծաւորութիւնը բաժանելով Քիչեան, Բարսեան և Տրուոր մասերի, դուք զըտնվում էք միայն դասակարգերի բաժանման ըսկզբում: Գուք պիտի դեռ ուսումնասիրէք քայլ առ քայլ հիւանդոտ կեղծաւորութիւնը, բարւոյ և չարի հարստութեան և աղքատութեան կեղծաւորութիւնը. այդպէս զանազանակերպ է պարոն Տարտիւֆի հագուստը: Բայց շարունակենք նրկապարել հասարական մեծ կեղծաւորութիւնը:

Կրօնական կէղծաւորութիւնը ունի անհամար երևոյթներ և բազմազան ձևեր:

Մի կիւրակի օր կանգնեցէք եկեղեցու դռների մօտ և դիտեցէք ձեր կողքով անցնող և Աստու տաճար մտնողների դէմքերը:

Որքան դէմք, այնքան արտայայտութիւն, այնքան էլ նրանց ալեկոծող զգացմունք: Ես համարձակվում եմ ասել, որ դուք չէք տեսնիլ նոյն իսկ երկու դէմք, որ արտայայտէին միևնոյն զգացմունքը և չէք հանդիպիլ երկու մարդու, որ գային

եկեղեցի՝ միևնույն նպատակով: Մինչդեռ ամբողջ կրօնի տեսակետից բոլոր մարդկանց կողմից կերպով բաժանում է երկու մեծ դասակարգերի հասարակույթներ և անհասարակույթներ:

Ի՞նչ յիմար, ի՞նչ կողմից բաժանումն:

Ամեն տեսակ կրօնական իդէալի վճռական բացատրման մինչև ամեն մի վարդապետութեան, պաշտամունքի ամեն մի ձևին կայր հաւատքը դուր ունէք մի շատ երկար փողոց, հազարաւոր, տասնեակ հազարաւոր վերստեր երկարութեամբ, որը պարունակում է իր մէջ ամբողջ մարդկութիւնը, կազմելով այնքան իջևաններ, որոնց անուանելը, միայն մի քանի հաստահատոր գիրք կկազմէր: Եւ միայն կարող եմ ասել, որ այս ճանապարհի մէջ տեղում կայ մի իջևան, ուր կանգնում են շատ շատերը, որոնք անկարող են լինում մինչև վերջը գնալ. դա յոսոյ հայրանն է:

Կարելի է ասել, որ ոչ մի բան այնքան ենթակայ չէ կեղծաւորութեան, որքան կրօնը: Լինի դա շնորհիւ այստեղ գործող անթիւ անհամար հոգեկան տարրերի, թէ շնորհիւ այն բանի, որ միևնույն արտաքին երևոյթները կարող են ծածկել շատ զանազանակերպ զգացմունքներ, իրողութիւնն այն է, ինչ ասացի: Դուր պատահած կը լինէք անշուշտ ձեր ծանօթների մէջ անհաւատներ:

րի, որոնք կանոնաւորապէս յաճախում են եկեղեցի և հաւատացողների՝ որոնք շրջանի և պայմանների շնորհիւ ձևանում են անհաւատ:

Իսկ ինչ ինձ է վերաբերում, ես համակարծիք եմ Փրիդերիկոս II-ի հետ, որ իր հպատակներին թոյլ էր տուել ընտրել այն ճանապարհը, որն իրանց կարծիքով, արքայութիւն տանելու համար ամենակարճն է: Ես միայն ցանկանում եմ և պահանջում եմ ճշմարտութիւն, անկեղծութիւն: Ես ցանկանում եմ, որ հաւատացողները շամաչէին իրանց հաւատալիքից, որ հաւատքի և անհաւատութեան արանքում գտնված մի որևէ կայարանում մնացողը չծիծաղի նրա վրա, որը կարողացել է այդ երկար աշխարհաշրջան ճանապարհը կտրել մինչև վերջը: Պիտի ոչնչացնել Ինկվիզիցայի* խարոյկը թէկուզ նրանից մնացած լինի շատ շնչին կայծ — ամենօրեայ անհամբերողութիւնը, որ ոչ է տալիս կողմից և յիմար ազազակներին — անասուն, զհասարակ, սոստոյաշար:

Ես ցանկանում եմ բոլոր ազնիւ հաւատալիքների անյիշաչարութեան, բայց պախարակում եմ հաւատացող և անհաւատ բոլոր Տարտիւֆներին:

Աւելի ծանր է իր խոր անբարոյականութեամբ և իր հետեանքներով հաղաթանկան կեղծաւորութիւնը: Այստեղ ես աչքի առաջ չունեմ անհատական կեղ-

ծաւորութիւնը, այլ այն որ պարունակվում է օրէնսգրքերում, որոնցով կառավարվում են ամբողջ ազգեր:

Մարդը իր անձնական շահի համար կարող է փոխել իր քաղաքական համոզմունքները անցնելով մէկ կուսակցութիւնից միւսը, նայելով թէ քամին սրտեղից է փչում, կամ շահի տեսակէտով կարող է ասել ուրիշ բան, բայց անել բոլորովին հակառակը: Ես գիտեմ շատ քաղաքական թեկնածուներ, որոնք իրանց ընտրողներին չեն յայտնում իրանց կարծիքները, այլ մասնաժողովից լսելով մեծամասնութեան կարծիքը դրա համապատասխան էլ կազմում են ընտրողական ծրարագիրը:

Քաղաքական գլխաւոր կեղծաւորութիւն, որ քայքայում է ամբողջ հասարակութիւնը, ես անուանում եմ այն, ինչ որ կապարի տառերով գրված է կանոնադրութիւններում և օրէնսգրքերում, որոնցով կառավարվում է ժողովուրդը: Դրանով հէնց մեր դարը զանազանվում է միւս դարերից և տալիս է մեզ իրաւունք, ոչ թէ մէկ այլ հարգար անգամ աւելի, որ մեր դարն անուանենք **Տարրի-Քի դար:**

Ես համարեա մի քառորդ դար, տարին բոլոր առանց հանգստանալու իբրև հասարակ զինւոր,

գտնվել եմ պարլամենտական այս կամ այն խմբի մէջ. ես կեղծիքի համար ծնված չլինելով, քաղաքական շարժանում զգում էի ինձ ինչպէս ձուկը ցամաքի վրա կամ ծիծեռնակը ջրի տակ:

Իմ երկու բարեկամներից ստացայ երկու գաս, որոնք բաց արին իմ աչքերը և ցոյց տուին մեր ժամանակի քաղաքական կեղծաւորութեան անգունդի խորութիւնը:

Մի անգամ այն կուսակցութիւնը, որին պատիւ ունէի պատկանելու, առաջարկեց ֆինանսական մի վատ ձև, որ հակասում էր առողջ գատողութեան: Ես վրդովեցի, բողոքեցի և ոչ մի կերպ չկամեցայ րէւարկել յայդ առաջարկութեան օգտին: Կուսակցութեան պարագլուխներից մինը, որ ինձ շատ մօտիկ բարեկամ էր, երկար խօսակցութեան ժամանակ սկսեց ինձ ապացուցանել, որ այդ օրէնքի ֆինանսական վնասը համեմատած նրա քաղաքական մեծ օգուտի հետ, շատ չնչին է. ուրեմն պիտի փոքրը զոհել, որ մեծը ստանանք:

Եթէ այս օրէնքը շանց կենար, նրա կարծիքով, հակառակ կուսակցութիւնը կգօրեզանար և ով գիտէ ինչ ծանր հետևանքներ կունենար մեր երկրի համար:

Սակայն ես չխոնարհվեցի և յայտարարեցի, որ

ոչ մի պայմանով յօգուտ օրէնքի ձայն չեմ տալ: Այն ժամանակ իմ բարեկամը նշաւակցարար շարժելով դուրսը ձեռքը դնելով ուսիս ստաց. «Սիրելի Մանտեղացցա, դու շատ լաւ մարդ ես, բայց քաղաքականութեան մէջ շատ յիմարն ես»:

Սա քաղաքական կեղծաւորութեան առաջին դասն էր, որ առկն ինձանից աւելի քաղաքագէտ բարեկամնես:

Անցկացաւ մի քանի տարի և ես հետզհետէ հեռացայ իմ կուսակցութիւնից, որը անցել էր պատմական շրջանը և ամուր կերպով պահպանում էր իր գոյութիւնը պարլամենտում, մինչդեռ երկրի մէջ նա մեռած էր համարվում:

Իբրև Պաւուրի*) հարազատ յաջորդ, այդ կուսակցութիւնը հերետիկոսութիւն էր անուանում այն բոլոր դադափարները, որ իր շրջանից չէին դուրս գալիս: Եւ ասան մի գեղեցիկ օր մոռացած մեծ Մաքրիավելական կանոնը թէ՛ Քշմարտն պիտի շողորմելէ կամ ոչնչացնել, առաջարկեց մի օրէնք, որ ոչ շողորմութում, ոչ էլ ոչնչացնում էր, այլ կատարեցրեց մեր թշնամիներին: Ես վրդովվեցի այս օրէնքի ձևի տակ թագնաված ստից և բաժանվելով ամենաթանկապին և հին բարեկամներիցս յայտարարեցի, որ ես կողմնակից չեմ կեղծ օրէնքներին:

Այն ժամանակ մօտեցաւ ինձանից աւելի քաղաքագէտ բարեկամս և երկար ու բարակ այդ անպիտան օրէնքի մասին զրուցելուց յետոյ, երբ աշխատում էր ինձ համոզել յօգուտ այդ օրէնքի ձայն տալ, վերջացրեց այս խօսքերով:

«Բայց սիրելի Մանտեղացցա, չէ՞ որ սա քաղաքական օրէնք է, սա ստեղծելու արար է»:

Այն, ճշմարիտ որ դա ստերի տոպրակ էր, ստերի, որ ոչ որի չխաբեցին և մեր թշնամիներին աւելի ուժեղ դարձրին, կանգնեցնելով նրանց ճշմարտութեան կողմը:

Երկրորդ դասից յետոյ ես էլ երրորդի պէտք չունեցայ:

Բայց սրանք անեկզոտներ, կեղծաւորութեան դատարկ գծեր են համեմատելով այն կեղծաւորութեան հետ, որ ոսկէ տառերով է գրված մեզ կառավարող օրէնսգրքում: Եւ մենք կարծում ենք թէ այս կեղծիքը ծածկող ոսկին կարող է պահպանել անփոփոխ և կանգուն:

Մեր հասարակութիւնը այնքան հին է, որ արտագրում է գարշահատութիւն, որ մտնում է նոյն իսկ հոտառութիւնից զուրկ մարդկանց ուսուցները, չնայելով ակտահանական և հոտեր չեղոքացնող միջոցների, չնայելով աշխատում ենք կրօնէր գառամութեան անխուսափելի քայքայման դէմ:

Մենք կարող ենք դիակները դմբել, բայց ոչ օրէնքներն ու հասարակական կազմակերպութիւնները, որոնք կենդանի նիւթ են կազմում, հետեւաբար պիտի ենթարկվին կենսական բարեփոխութեան ճակատագրական օրէնքին:

Մենք 89 թւականին ազատութիւն խոստացանք բոլոր ազատվածներին, բայց ինչ օգուտ կարող է տալ ազատութիւնը, երբ ժողովրդի մեծամասնութիւնը տգիտութեան և քաղցածութեան պատճառով անգործութեան է դատապարտված:

Մենք բոլորին խոստացանք եղբայրութիւն. բայց ես տեսնում եմ շուրջս եղբայրներ, որոնք հիանալի կերպով կողոպտում են իրար:

Անկասկած, մեր օրէնքներն աւելի արգարագատ են, քան անցեալ ժամանակների օրէնքները, որ նրանք առաջադիմական են և լի բարի ու սուրբ ցանկութիւններով. բայց սրբան կեղծիք, սրբան սուտ է թափնված դեռ օրէնսգրքերի և կանոնադրութիւնների խոր ծալքերի մէջ:

Վաղուց օրէնսդիրները ուշադրութիւն են դարձրել ամեն կողմ երերվող և կործանման վտանգված շինութեան վրա, որ փտել էր գերեզմանափոր միջատների կրծոտելուց, միջատներ, որ արտաբուստ սակեղօծ և պսպղուն են: Ժամանակակից հասարակութիւնը իր հիմքի մէջ ունի անա-

զին կեղծիք, բայց դեռ ոչ սք չի ուզում հաւատալ այդ բանին:

Ոչ մի բան երկարակեաց չի լինիլ, եթէ ճշմարտութեան վրա չէ հիմնված. իսկ մենք կեղծիքի մէջ ենք ապրում: Ոչ մի զգացմունք դիմացկուն չէ, եթէ անէղծ չէ, իսկ մենք զգացմունքի ճարտի-Քներ ենք, ինչպէս և մտքի ճարտի-Քներ:

Թող ամեն մի անհատ աշխատի անկեղծ լինել իր ընտանեկան կեանքում, իր երեխաների դատտիրակութեան մէջ, իր մտքերի արտայայտելուն: Մեզ վաղուց է զգվեցրել գարշահատ շքշանում ապրելը. փնտուներ աւելի մարուր, առողջարար և բարեբեր օգ:

Աշխատենք այնպէս լինել, որ հարիւր տարի յետոյ մի ուրիշ գրող ուզելով բնորոշել քսաներորդ դարը, իրաւունք չունենայ անուանել ճարտի-Քներ, այլ անուանի ճշմարտութեան, շխտութեան արք:

Իսկ մենք աշխատենք ժողովրդական համեստ գրքոյկներում, դպրոցներում, եկեղեցիներում պարլամենտներում պատրաստել մեր զաւակների համար այնպիս աշխարհ, ուր սրբան կարելի է թիչ կեղծիք լինի:

Յ Ա Ի Ե Լ Վ Ա Ծ

Աչքի առաջ ունենալով, որ գրքոյցիս ընթերցողներէից մի մասը կարող է ծանօթ չըլլիւնել հին եւ նոր պատմութեան, յարմար համարեցի սրա մէջ յիշատակիլս ընծանօթ բաների եւ դէպքերի հասկանալու նկարագիրը դնել այստեղ, գիրքն առելի մատչելի դարձնելու համար:

1. Արգօս — Աւանդութիւնն ասում է, որ Արգօսը բազմաթիւ աչքեր ունեցող մի հսկայ էր և համարվում է Ինսիսի որդի. նա մենամարտելով Արկադիան աւերող հրէշ եզան հետ, սպանեց նրան. Արգօսը խեղճեց և Եխիզնի օձին — երկրի և Տաուտաուոսի աղջկան. ապա Հերան (Չեսի կինը) Իօին փոխարկելով կովի, Արգօսին կարգեց նրա պահապան, որ երբէք չէր քնում. երբ փակ էին նրա մի քանի աչքերը, միւսները բաց հսկում էին: Աւանդութիւնը Արգօսի մահը երկու տեսակ է պատմում: Հերմէսը քարի հարվածով սպանեց նրան, իսկ Հերան փոխարկեց սիրամարգի. միւս

վարիանտն այսպէս է. իբր Հերմէսը ջութակի նուագով քնացրեց նրան և ապա գլուխը կտրեց, իսկ Հերան սիրամարգի պոչը զարդարեց Արգօսի աչքերով: Երբ մէկը խիստ ուշադրութեամբ հրահում է մի որևէ բանի, ասում են Արգօսի աչքերով է հսկում:

2. Ա գ ա մ հ մ ն ո ն Յունաց դիւցազներգութեան մէջ երգվող հերոսներից մինն է և Հոմերոսի պատմելով Տրոյական պատերազմում ամբողջ զօրքի հրամանատարութիւնը նրան էր յանձնված: Սա մենեյայոսի եղբայրն էր, որի կին գեղեցիկ Հեղինէին փախցրել էր Տրոյայի թագաւոր Պրիամոսի որդի Պարիսը:

3. Ա ք ի Լ Լ է ս. Յունաց դիւցազներգութեան մէջ սա երգվում իբրև ամենակտրիչ դիւցազն, որը մասնակցեց Ագամեմնոնի հրամանատարութեամբ սկսված Տրոյական պատերազմին և սպանեց Պարիսի եղբայր քաջ Հեկտորին բայց վերջ ստացաւ հայ իշխան Չարմայրից, թէև վերջինս էր Տրոյական պատերազմում, Խորենացու վկայութեամբ, սպանվեց Աքիլլէսի նէտից:

Աւանդութիւնը պատմում է, որ Աքիլլէսը Մերմիդօնների թագաւոր Պելէի և ծովային աստուածուհի Թէտիդի մերձաւորութիւնից է ծնվել և պատկանում է անմահների դասին:

Նոյն աւանդութիւնը պատմում է թէ որքան Աքիլէսը քաջ էր, այնքան էլ շատակեր էր. նա ճաշի ժամանակ կարողանում էր մի ամբողջ կոն ուտել:

4. **Գ ա ս կ ո ն ի ա.** Սա հարաւային Փրանսիայում Պիրենեան լեռնաշղթայի վերին ստորոտում ընկած մի գաւառ է, որի բնակիչները ժիր, ջանասէր, ընդունակ և վառ հրեակայութեան տէր մարդիկ են. նրանք այնքան ինքնահաւան են, որ գասկոնցի խօսքը Եւրոպացոց համար դարձել է հասարակ անուն և նոյնանիշ է սնափառ խօսքին:

5. **Գիլեօտին.** Մի գործիք է, որով մահուան դատապարտվածներին գլխատում էին. սա բաղկացած էր երկու սիւններից մէջը փոս գցած և մի ծանր կեռ սուր դանակից՝ մահապարտի գլուխն անց էին կայնում սիւնների մէջ և դանակը, ուժով ցած էին թողնում մահապարտի վզի վրա, որ վայրկենաբար կտրում էր: Փրանսիական յեղափոխութիւնից առաջ Գիլեօտինը գործածութեան մէջ էր Եւրոպայի միւս պետութիւնների մէջ ուրիշ անունով, իսկ 89 թւի յեղափոխութեան ժամանակ բժիշկ Գիլեօտինը, որ յեղափոխութեան ղեկավարներից մինն էր. առաջարկեց մահուան պատիժը միատեսակ դարձնել և գործածութեան մէջ մտցնել այդ գործիքը: Ժողովը ընդունեց այս

առաջարկը և այնուհետև յանցաւորներին այդ գործիքով էին գլխատում, որն ի պատիւ բժշկի Գիլեօտին կոչեցին: Ընդհանրացած կարծիք է իբր թէ բժիշկ Գիլեօտինին էլ այդ գործիքով են գլխատել, բայց դա սխալ է. բժիշկը 89 թւի յեղափոխութիւնից յետոյ երկար ապրելով 1814 թւին մեռել է իր բնական մահով:

6. **Ջ օ լ ա.** Փրանսիական ժամանակակից նըշանաւոր վիպասանը ծնվել է 1840 թւին: Ջօլան հակառակ իր ժամանակակից վիպագրողներին, որոնք աշխատում էին իրանց վէպերի մէջ պատկերացնել միայն բարոյականը, ազնիւը և լսոյս տալ կեանքի անբարոյական կողմերը նկարագրելուց, կամ գրում էին քօղարկված, «խնայելով ընթերցողների ճաշակը», Ջօլան ընդհակառակը, բարձրագոյ բողոքելով այդ կեղծիքի դէմ, վէպը յայտարարեց կեանքի իսկական հայելի, որի մէջ ամեն բան պիտի երևայ այնպէս, ինչպէս իրօք գոյութիւն ունի: Այդ պատճառով էլ «նուրբ ճաշակ ունեցողները և ծայրայեղ բարոյական էտիկէստների հետևողները» չեն կարողում Ջօլային, որովհետև նրա գրվածների մէջ փողոցային ապականութիւնը, բարոյական անկումն և սրբապղծութիւնները նոյնքան պարզ և բարձրագոյ են, որքան մարդկային բարոյական հակումները:

7. Էպիկուր. Աթենացի նշանաւոր փիլիսոփան ապրում էր Քրիստոսից առաջ 342-271 թւականներին: Էպուկուրի վարդապետութիւնը կայանում էր նրանում, որ մարդկանց կեանքի նպատակը միայն իրական աշխարհում էր գտնուում: Ժխտելով ապագայ կեանքը, նա ասում էր. մարդ պիտի աշխատի ինչ միջոցով էլ լինի հասնել ֆիզիքական և բարոյական բաւականութեան: Չնայելով էպիկուրի քարոզութիւնների վնասակար կողմերին, պատմաբանները էպիկուրին նկարագրում են իբրև ամենաբարոյական և ազնիւ մարդ:

8. Ինկվիզիցիա. Հռովմէական եկեղեցու ղեկավարները հերետիկոսութիւնը վերացնելու և իրանց հարստացնելու համար հիմնեցին Ինկվիզիցիան, որի պարտաւորութիւնն էր գանազան տանջանքների միջոցաւ դուրս քաշել յանցաւորից խոստովանութիւն և պատժել, որի ժամանակ յանցաւորի ամբողջ կարողութիւնը գրաւում էին: Ինկվիզիցիան իր զարգացման գագաթնակէտին հասաւ տասներկուերորդ դարից մինչև տասն և հինգերորդ դարը, երբ նրա գործունէութիւնը սարսափ էր տարածել համարեա ամբողջ Եւրոպայում: Բայց ինկվիզիցիան ամենայարմար հող գտաւ զարգանալու Սպանիայում, ուր քաղաքական իշխանութիւնն իր կողմից ինկվիզիտորներին աջակ-

ցութիւն էր ցոյց տալիս: Սպանիան երկար ժամանակ ենթարկված լինելով արաբների տիրապետութեան, մաւրերը կարողացել էին ահադին հարստութիւն ձեռք բերել. իսկ այնտեղ ապրող հրէաներն էլ իբրև ճարպիկ վաճառականներ նոյնպէս շատ հարուստ էին. ահա այս երկու ցեղերը իրանց հարստութեամբ բնիկների նախանձն էին շարժում, իսկ կառավարութեան և Գոմինիկեան հայրերի ախորժակը, և որովհետև հրէաները Մովսիսի, իսկ Մաւրերը Մահամէտի հետևողներ էին, ուստի ենթարկվեցին ամենածանր հալածանքի. նրանց առաջարկվեցաւ կամ ընդունել քրիստոնէութիւնը կամ հեռանալ երկրից: Չատերն ակամայից յանձն առան քրիստոնէութիւնը, բայց այժմ էլ ենթարկվեցին կասկածի, թէ առ երես են ընդունել քրիստոնէութիւնը. վերջապէս 1609 թւին Փիլիպպ III թագաւորի հրովարտակով արտաքսվեցին երկրից: Մի վաղափար կազմելու համար թէ ինչ աւերում գործեց ինկվիզիցիան Սպանիայում, բաւական է բերել հետևեալ թւանշանները. Տասն և ութ տարուայ ընթացքում (1481—1498) այրել էին 9000 մարդ, 6500 երկրից փախած մարդկանց նկարներն ու խրճիկներն էին այրել, 90000 մարդկանց ստացվածք էին գրաւել: 1481 թուից մինչև 1809 թւականը — երեք հարիւր

տարուայ ընթացքում Սպանիայում մօտ կէս միլի-
օն մարդ ենթարկվել էին ինկվիզիցիայի գատարա-
նին, որոնցից 30000-ը այրվել էին, 18000-ի պատ-
կերներն ու խրճիկներն էին այրել, մնացածները
ենթարկվել էին զանազան տանջանքների, իսկ 3
միլիօնից աւելի արտաքսվել էին երկրից: Ինկվիզի-
ցիայի ազդեցութիւնը տասն և ութերորդ դարում
սկսեց թուլանալ, և տասն և իններորդ դարի սկզբ-
բում վերջնականապէս ջնջվեց բոլոր երկրներէից:

9. Իւվենալ. Սա քրիստոնէական առաջին
դարու նշանաւոր երգիծաբաններից մինն էր ազ-
գաւ հռովմայեցի. չկարողանալով տանել իր հայ-
րենակիցների ընկած և ազականված բարբերը,
սուր և կծու կերպով ծաղրել է նրանց աւելորդ
չեմ համարում բերել նրա գրվածքներից մի կը-
տոր. — հոգեվաճառութեամբ ես պարապում թէ
կաշէվաճառութեամբ, այդ միւնոյն է. օգուտը,
չահը միշտ գերադասելի է, ինչ աղբիւրից էլ ա-
ռաջ գալու լինի: Թող քո շրթունքներից չհեռա-
նայ բանաստեղծի ասածը, որ հեղինակել չէին
ամաչել աստուածները, նոյն իսկ Իւպիտերը թէ՛
«ոչ ոք չի հարցնում, սրտեղից է քեզ հարստու-
թիւնը, միայն թէ դու ունեցիր, այդ հերիք է»:
Այս օրէնքն են ներշնչում դեռ գեանի վրա սո-
դացող մանուկներին իրանց պառաւ դայեակները,

անգիր են սերտում բոլոր աղջիկները նախքան
գրել կարգալ սովորելը:

10. Լեօպարդի. Սա իտալացի հոռետես
նշանաւոր բանաստեղծ էր, որ ապրում էր ներկայ
դարուս առաջին քառորդում. սրա հայրը գետնա-
կանի համբաւ ունէր և պատկանում էր խիստ
պահպանողական կուսակցութեան ու դէպի իր ըն-
տանիքը խստապահանջ էր: Լեօպարդին զուրկ
լինելով ընտանեկան փաղաքշանքներից իրան նուի-
րեց ընթերցանութեան և դեռ 15 տարեկան հա-
սակում տիրապետում էր հին լեզուներին և պատ-
մութեան, իսկ 17 տարեկան հասակում նրա
թարգմանութիւններն ու ինքնուրոյն աշխատու-
թիւնները ընդհանուր ուշադրութիւն էին գրաւել.
սկզբում խիստ կրօնական, բայց հրադհետէ նա
փոխվեց կատարեալ հոռետեսի և անհաւատի: Լե-
օպարդին շատ արձակ և յանգաւոր գրվածներ
ունի, ուր արտացոլում է նրա հոռետես փիլիսո-
փայութիւնը: Իր բարեկամներից մէկին գրած
նամակում նա կեանքն այսպէս է բնորոշում.
«Կեանքն ուղղակի շարիք է ինձ համար, բայց մե-
նակ ինձ համար չէ. կեանքը մեզ բոլորիս տանում
է դէպի մահ. բնութիւնը ծնում է ոչնչութիւն և
սրանով էլ սնվում է, հետևաբար ճշմարիտ իսկու-
թիւնը, միակ իրականութիւնը մահն է. մնացած

բորորը — ոգորմելի երևակայութիւն է. կարելի է նրանց հաւատալ, կարելի է ինքնախարէութեան մէջ ընկնել, բայց կորովի մարդը, որ նայում է ճշմարտութեան երեսին աներկիւղ, իրան չի խաբել անդրդերեղմանեան կեանքի երևակայութեամբ և հանդերձեալի տեսիլքներով»:

11. Լ ա ռ ի ը ի ն տ. Այսպէս կոչվում են առհասակ այնպիսի բազմասենեակ շինութիւնները, ուր մանելուց յետոյ դժուար է գտնել դուրս ելնելու ճանապարհը: Լաբիրինտ շինութեան մասին աւանդութիւնը պահել է մի քանի վարիանտ, որոնցից երկուսն ամենատարծվածն են. 1. Յունաց ազգային հին աւանդութիւն ասում է, որ Կրէտէ կղզու հիւսիսային ափին Կոնոսին մօտիկ գտնվում էր Լաբիրինտ կոչված 3000 սենեակներից բաղկացած մի շինութիւն, որ ըստ աւանդութեան շինել է Գեդալ ճարտարապետը Մինոս թագաւորի հրամանով, ուր պահվում էր Պասիֆա թագուհուց ծնված Մինոտաւրոս հրէշը, որին յոյները պարտական էին վիճակով մարդկային զոհ բերել: Որպէս թէ Թէդէոսը, որին վիճակ էր ընկել զոհվելու, Մինոսի ազջկայ խորհրդով վերցրնում է մի կծիկ թել կապում առաջին դրանը և հետզհետէ ներս մտնում մինչև Մինոտաւրոսին հասնելը. սպանում է նրան և նորից թելը կըծ-

կելով դուրս գալիս ու այսպիսով ազատում է յոյներին ամօթալի տուրքից: 2. Երկրորդ աւանդութիւնն ասում է, որ Լաբիրինտ բառը առաջ է եկել Լօպէ-րօ-ունտ անունից, որ նշանակում է լճի ափ դուրս եկող տաճար: Իբր թէ 2100 տարի Քրիստոսից առաջ Եգիպտոսի փարաւօն Ամենեքոս III Մերիդեան լճի ափին Միջին Եգիպտոսում շինել է ասել գրանիտեայ ահագին շինութիւն, որի մի կողը կազմում էր պիրամիդներից մինը. այդ շինութիւնն ունեցել է 100 սաժէն երկարութիւն և 70 սաժէն լայնութիւն, ուր բազմաթիւ սենեակներն այնպէս են միացած իրար հետ, որ դժուար է մի տեղից մտնել և նոյն տեղից դուրս գալը: Հին պատմաբանները — Հերոդոտ, Ստրաբօն, Պլինիոս տալիս են այս Լօպէ-րօ-ունտի նկարագիրը, որից այժմ մնացել է մի խղճուկ աւերակ. որից դժուար է գուշակել գրա ինչ լինելը: Ենթադրվում է, որ այդ եղած պետի լինի հին եգիպտական Պանթէօն:

12. Կ ա լ ու ը ը. Իտալացի նշանաւոր քաղաքական գործիչը ծն. 1810 և † 1861 թւին: Սա իւր քաղաքական ամբողջ գործունէութիւնը գործ դրեց Իտալիայի միութեան ընդդէմ Աւստրիայի: Կաւուրը յայտնի է Իտալիայի պատմութեան մէջ իբրև կորովի, հաստատակամ մարդ և կողմնակից

Իտալիայի պատերազմական ուժի զօրեղացնելուն և իբրև նշանաւոր հռետօր և բազմակողմանի փորձառու մարդ երկար ժամանակ հանդիսացաւ որոշ կուտակցութեան սրահազուխ:

13. **Հ եր մ ա ֆ Ր Օ Ղ ի տ.** Ըստ Օլիղիտոսի Հերմաֆրօզերը Հերմէսի և Աֆրօզիտի որդիքն է, որ դաստիարակված էր Իդայում յաւեր ժահարսնների ձեռքով. նրա գեղեցկութեամբ յափշտակված էր Սալմակիդա յաւերժահարսը, որը չկարողանալով նրա սէրը գրաւել, խնդրեց աստուածներին յաւերտեանս իրան միացնել Հերմաֆրօզիտի հետ, որ և կատարվեց. այն ժամանակ նրանց մարմինը միացաւ և կազմեց կէս տղամարդ և կէս կին: Այնուհետև երբ կենդանու սեռը դժուար է լինում որոշել, այդպիսոտն անուանում են հերմաֆրօզիտ:

14. **Մ ո գ ա յ ի կ ա.** Գեղարուեստի մի ճիւղն է. զանազան գոյների ապակիներից, քարերից և կաւերից բազկացած ծաղկանկարները ու տեսարանները մոզայիկական են կոչվում: Մոզայիկան սկիզբն առնելով Արևելքում, հետզհետէ անցաւ Բիւզանդիա և Հռոմ, ուր գեղարուեստի սիրահար յոյներն ու հռոմայեցիք աշխատեցին կատարելութեան հասցնել գեղարուեստի այդ ճիւղը: Մոզայիկան ըստ տեսակի երկու ճիւղ ունի հին՝ Բիւզանդական և նոր հռոմէական: Վերջինս աչքի

է ընկնում իր բազմերանգ գոյներով և բազմատեսակ ծաղիկներով: Մոզայիկայով զարդարում էին հնումն մեհեանների պատերն, առաստաղներն ու յատակները, իսկ Քրիստոնէական դարերում՝ եկեղեցիների, տաճարների և մատուռների ներսը:

Մոզայիկայի իւրաքանչիւր մասնիկը, որ առանձին առած մի անկախ ձև կամ պատկեր է ներկայացնում, կոչվում է Ֆրազամէնտ:

15. **Մ հ տ ա ֆ ի զ ի կ ա** — կոչվում է փիլիսոփայութեան այն ճիւղը, որ հետաքրքրվում է երևոյթների իսկական պատճառը գտնել և ըստ յատկութեան բաժանվում է մի քանի տեսակների, սրոնք առանձին առանձին կազմում են փիլիսոփայութեան տարբեր ճիւղերը — ինչպէս նիւթապաշտութիւն, գաղափարականութիւն և այլն:

16. **Մ ա ք ի ա վ է Լ Լ ի.** Փլօրենտացի յայտնի քաղաքագէտը ապրում էր տասնևվեցերորդ դարու սկզբներում. սա ստացել էր բազմակողմանի և հիմնաւոր կրթութիւն և իրերի դրութիւնը շատ շուտ կարողանում էր ըմբռնել. նա կարողանում էր, ինչպէս ասում են, թափանցել մարդկանց հոգու խորքերը, իմանում էր գիմացինի կարծիքը, զգացմունքը և ըստ այնմ վարվում նրա հետ: Նրա բազմաթիւ գրվածները, ուր արտացոլում է իր ուղղութիւնը, յայտնի գիտնականնե-

րի կողմից տարրեր կերպով են բացատրւած. ոմանք ճանաչում են Մաքիավելլուն սրպէս կեղծաւոր, շողոքորթ, ցած և սրբութիւն չճանաչող մարդ, միւսներն ինդհակառակը պնդում են, թէ նա իր գրվածներով ծաղրել է ժամանակակից բարքերը և տիրող կառավարութեան եղանակը:

Յամենայն դէպս Մաքիավելլի անունը դարձել է հասարակ անուն և տալիս են այն մարդկանց, որոնց գործունէութիւնը բնորոշվում է խորամանկութեամբ, կեղծաւորութեամբ, որոնք ոչ մի սրբութիւն չունեն և նպատակներին հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն չեն դնում:

17. Մ օ լ ի ե ր. Որովհետև հեղինակը այս գրքը րոյկի նկարագիրը անում է համեմատելով, այս նշանաւոր երգիծաբան թատերգուի հերոսներից մէկի—Տարտիւֆի հետ, ուստի թող ներվի ինձ սրա մասին փոքր ինչ ընդարձակ գրել:

Ժան Բատիստ Մօլիեր ծնվել է Պարիզում 1622 թւին. մինչև 10 տարեկան հասակը մեծանալով հարազատ մօր Մարի Կրէսէի հսկողութեան տակ, այնուհետև զրկվելով հարազատ մօրից, մնաց անուշազիր խորթ մօր կողմից: Ժանի մօրապապը նկատելով իր թոռան մէջ ընդունակութիւն և տաղանդ, առաւ իր հովանաւորութեան ներքոյ և տուեց այն ժամանակ մոդայում եղած

եղուխաների Կօլլէժ գը Կլերմօն դպրոցը, որը չը նայելով իր կղերական ոգուն, բաւական պաշար էր տալիս իր սաներին, և Մօլիերը շուտով կարողացաւ ազատ կարգաւ և հասկանալ հռովմայեցի կատակերգուների գրվածները: Դպրոցը ուշք էր դարձնում կլասիքական ողբերգութիւնների վրա և իր տարեկան հանդէսներին դպրոցի սաները խաղում էին գրանցից մէկն ու մէկը և, ինչպէս երևում է, Մօլիերն էլ մասնակցում էր այդ ներկայացումներին: Այս դպրոցում նոր փիլիսոփայութիւնը մերժված էր, բնագիտութիւնն ամենևին չկար, իսկ կրօնականի մէջ թագաւորում էր արարողական մասը: Բարեբաղդաբար Մօլիերը դուրս եկաւ Կօլլէժից և ընկաւ մի այնպիսի շրջան, ուր ազատ մտածմունքը, հնամուտութեան դէմ կռուելը խրախուսվում էր. այս շրջանն իր ազդեցութիւնն ունեցաւ ապագայ նշանաւոր գրողի վրա: Մօլիերը շարունակեց իր ուսումը Օրլէանում իրաւաբանական ճիւղն ընտրելով, բայց կիսատ թողեց և իր իրաւաբանական ուսումը պէտք եկաւ նրան միայն կատակերգութիւնների մէջ դատաստանական ընդունված ձևեր և եղանակներ գրօշմելու համար:

Միրելով թատրոնը, թողեց ամեն պարապմունք և խմբեր կազմելով սկսեց ներկայացումներ տալ դաւառական քաղաքներում: 1858 թւին իլ

խմբով տեղափոխուեց Պարբիզ և շնորհիւ իր տա-
ղանդաւոր խաղին, արժանացաւ Լիւզովիկոս XIV
կայսեր ուշագրութեան. սակայն Մօլիերը երկար
չկարողացաւ վայելել կայսեր հովանաւորութիւնը.
Նրա մի քանի ինքնուրոյն գրվածները բեմ դուրս
բերելուց յետոյ Մօլիերը վաստակեց ահագին թը-
ւով թշնամիներ, որովհետեւ այդ տեսարանների
մէջ պատկերացրած էին բարձր դասակարգի, հո-
գևորականութեան և պալատականների այլանդակ
պատկերները: Մօլիերի թշնամիները համոզեցին
Լիւզովիկոսին նրան հեռացնել կայսերական թատ-
րոնից և նրա գրվածները իբրև սրբապղծութիւն
արգելել բեմի վրա դնելուց: Հոգևորականութեան
և բարձր դասակարգի զայրոյթը գազաթնակէտի
հասաւ, երբ Մօլիերը գրեց «Տարտիւֆ» կոմեդիան,
որ սուտապաշտութեան մի սքանչելի հիւսվածք
է, ուր անողոք կերպով բարեպաշտութեան դի-
մակը վար է առնված հոգևորականի վրայից, որի
տակից երևում է ստորաբարչ, կեղծաւոր, շահա-
խնդիր մի ճիւղաղ—Տարտիւֆը: Այս պիեսի ներ-
կայացումը անհամեատ զօրեղ տպաւորութիւն
թողեց, մանաւանդ, որ Տարտիւֆի դերը խաղում
էր ինքը Մօլիերը: Ծաղրված հոգևորականութիւ-
նը խնդրեց կայսեր պաշտպանել կրօնը, իբր թէ
Տարտիւֆի ստուերի տակ Մօլիերն ուղեցել է

ծաղրել իսկական աստուածաշտութիւնը: Մօլի-
երի դէմ զինվեցին համարեա բոլոր աղղեցիկ և
զօրեղ մարդիկ — թագուհին, հոգևորականութիւնը,
բարձրագոյն վարչական մարմինը և ստիպեցին
Լիւզովիկոսին արգելել Տարտիւֆի հրապարակա-
կան ներկայացումը: Բայց սրամիտ Մօլիերը իր
պիեսին տուեց «Խաբեբայ» անունը, որի գլխա-
ւոր հերոսն էր ոչ թէ հոգևորական, այլ աշխար-
հական Պանիւֆը: Մօլիերի մահից մի քանի տա-
րի յետոյ — 1669 թւին առաջին խմբադրութեամբ
կրկին թոյլ տրվեց Տարտիւֆի ներկայացումները
և տպագրվեց: Մօլիերը գրեց դարձեալ երկու
պիեսներ — Միզանտրոպ և Դօն Ժուան, որոնք
ներկայացնում էին մեծ մասամբ հասարակական
բարքերի ապականութիւնն ու տիրող հոսանքը:
Այս երեք պիեսները իրանց բովանդակութեան
ներգաշանակութեամբ կազմում են եռաբանու-
թիւն (տրիլոգիա):

Մօլիերն իբրև նուրբ դիտող, իր միւս երգի-
ծաբանական կոմեդիաների մէջ սքանչելի կերպով
դուրս է բերել բոլոր դասակարգերի իսկական
պատկերն իրանց լաւ և վատ հակումներով: Մօ-
լիերն իբրև շնորհալի գերասան, իր կոմեդիանե-
րի գլխաւոր դերերը մեծ մասամբ ինքն էր կա-
տարում: 1863 թւականին նա խաղում էր երեւ-

կայական հիւանդ պիեսան բայց իրան վատ էր գգում, այն ժամանակ, երբ բժիշկը իր ձևակատարութիւնների յետևից էր, սաստիկ հազալուց Մօլիերի զարկերակը պատառվում է և նրան բեմից դուրս են տանում կիսամեռ, իսկ մի ժամից յետոյ մեռնում է:

Տարտիւֆի տիպից վիրաւորված երկու քահանաներ հրաժարվում են գալ նրա մօտ, երրորդը գալիս է երբ արդէն մեռած էր: Արքեպիսկոպոսը արգելում է թաղման եկեղեցական կարգը կատարել իբրև մեղքերը չքաւած մեռնողի և փոխում է իր վճիռը այն ժամանակ, երբ կայսրն զգացնել է տալիս, որ իրան դուրեկան չէ այդ աստիճան խստութիւնը: Մօլիերին թաղեցին ս. Յովսէփի գերեզմանատնից դուրս:

Չնայելով երեք դար է անցել Մօլիերի մահից յետոյ, սակայն նրա ստեղծագործած տիպերը մնացել են անմահ, իսկ այդ տիպերից ամենայայտնին, ամենազեղեցիկը—կեղծաւոր, շողոքորթ, հանգամանքներին յարմարվող, շահախնդիր և բարեպաշտական դիմակի, հոգևորական սքէմի տակ ծածկված Տարտիւֆը դեռ երկար կմնայ իբրև մարմնացում մարդկութեան այլանդակ հակումների, քանի որ սա մնվում, մեծանում և դաստիարակվում է կեղծ ու պատիր հանգամանք-

ների մէջ:

18. Պալլադիում. Յունական առասպելաբանութեան մէջ պատմվում է հետևեալը. Տրոյական պատերազմի ժամանակ երկնքից Տրոյա քաղաքի մէջ ընկաւ Պալլադա աստուածուհու արձանը իբրև գրաւական այդ քաղաքի անյաղթելիութեան. բայց Ողիսևսի և Դէոմեդի խորամանկ հնարքներով գողացվեց, որից յետոյ յոյները կարողացան գրաւել Տրոյա քաղաքը:

Պալլադիում կոչվում է առհասարակ այն սրբազան առարկան, որ պահում պաշտպանում է մի որևէ իր:

19. Պալիտրա կոչվում է նկարիչների այն տախտակը, որի վրա նկարչութեան ժամանակ զանազան ներկեր են դնում և գոյներ են բաղադրում:

20. Պարլամենտ. Սահմանադրական միապետութեան և հասարակապետութեան մէջ պետական բոլոր գործերը քննվում և վճռվում են մի ժողովի մէջ, որ կոչվում է պարլամենտ. պարլամենտի վճիռները պաշտօնեաների համար օրէնքն է ճանաչվում: Պարլամենտի անդամները ընտրվում են ժողովրդից և ներկայացնում են վերջնիս ձայնը:

21. Պլատօնական կոչվում է այն հա-

կումը, ցանկութիւնն և զգացմունքը, որը չի իրականանում, այլ մնում է լոկ ցանկութիւն կամ զգացմունք հոգեկան աշխարհում կամ մտքի մէջ: Պատօնը Աթենացի փիլիսոփայ էր, որ ապրում էր Քրիստոսից երեք դար առաջ:

22. Պրօմէթէոս. Յունական առասպելաբանութեան մէջ պատմվում է թէ. Պրօմէթէոսն երկնքից յափշտակել է կրակը և տուել է առաջին մարդուն—Դեկալիօնին: Այս բանի վրա բարկանալով Հայր Աստուածը—Ջևոր հրամայեց շրջաթայել նրան Կովկասեան լեռներին և անգղը կրտցահարում էր նրա շարունակ մեծացող փայծախը անասելի տանջանք հասցնելով Պրօմէթէոսին, մինչև այն ժամանակ, երբ Հերքուլէսն ազատեց նրան և բարձրացրեց Ոլիմպոսի գագաթը իբրև աստուածների խորհրդական:

23. Պարագիտ. Այսպէս կոչվում են այն բոյսերն ու կենդանիները, որոնք բացառապէս ապրում են ուրիշ բոյսերի ու կենդանիների հաշուով: Փոխաբերաբար պարագիտ կոչվում և այնպիսի մարդիկ, որոնք ապրում են ուրիշների աշխատանքով:

24. Պատօլօգիա կոչվում է բժշկական այն ճիւղը, որ ուսումնասիրում է հիւանդութիւնների էութիւնն ու նրանց առանձնայատկութիւն-

ները: Պատօլօգիան ամենահին ժամանակներից առանձին ուշադրութեան առարկայ է եղել և բաժանվում է երկու մասի—ընդհանուր և մասնաւոր: Ընդհանուր պատօլօգիան քննում է հիւանդութիւնների էութիւնն ու պատճառներն ընդհանրապէս, իսկ մասնաւոր պատօլօգիան ուսումնասիրում է հիւանդութիւնները իւրաքանչիւր կազմվածքի, հասակի կամ սեռի մէջ:

Բացի անհատական պատօլօգիան, կայ և ցեղերի պատօլօգիա, որ ուսումնասիրում է ցեղական հիւանդութիւնները, որովհետև վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ յայտնի հիւանդութիւններ յատուկ են մի որոշ ցեղի կամ կան ցեղեր, որ տրամադիր են աւելի շուտ բռնվելու մի որև հիւանդութեամբ:

25. Սցիլլա և Խարիրդա. Սիցիլայի նեղուցում ամիբը քարքարոտ են. իսկ ծովի մէջ կայ պտուտակաւոր հոսանք, որ կոչվում է Խարիրդա: Հնումն այս տեղ համարվում էր վտանգաւոր ծովագնացների համար, որովհետև երբ ուզում էին խոյս տալ Սցիլլայի խութերից, ընկնում էին Խարիրդայի պտոյտների մէջ, իսկ սրանից խոյս տալու դէպքում ընդհարվում էին Սցիլլայի խութերին. այդ պատճառով երբ մարդ նեղ, անել դրութեան մէջ է լինում, ասում են ընկել

է Սցիլլայի և Խարիբլայի արանքը:

26. Սոփեստ. Աթէնքում Քրիստոսից մօտ չորս դար առաջ կային փիլիսոփայութեան մի քանի ներկայացուցիչներ, որոնք տարբեր ուղղութիւն էին քարոզում ժողովրդին. այդ ուղղութիւններից մինն էր և սոփեստական փիլիսոփայութիւնը, որի հիմնադիր համարվում է Աբդերացի Պրատագորը: Սոփեստների նշանաբանն էր ճառերի, վիճարանութեան և զրուցատրութեան միջոցով պաշտպանել իրանց գաղափարը:


Ընդհանրացած կարծիք է, որ սոփեստներն իբրև լեզուագարներ շատ անգամ ղէպքերն աղաւաղում էին և դանազան ոլորապտոյտ ճանապարհներով կարողանում էին սեր սպիտակ ցոյց տալ և մարդկանց շլացնել:



ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Սխառ	Ուղիղ
23	ամրակազմի	ոսկրակազմի
27	մերկութիւնն	մերկութիւն
41	նախաձնող	նախաձնող
44	յատուկը	յատուկ է
45	որդուն	որդուն,
46	յանձանքներն	յանցանքներն
55	անյայտութիւնը	անյայտութեանը
78	մարդկան	մարդկանց
89	ճշմարտութեան և հասկացողութիւնը	ճշմարտութեան հասկացողութիւնը
107	արտայայտելուն	արտայայտելում
109	մենեկայոսի	Մենեկայոսի
114	կաշէվաճառութեամբ	կաշէվաճառութեամբ
»	ամաչել	ամաչիլ
126	կոչվում	կոչվում են





2013

« Ազգային գրադարան

4310



NL0038090

